2015, ՀՈՒԼԻՍ Բ, ԹԻՎ 14 (442)

Բրիտանյա Հայաստան

[illegible]

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԵՇԱՐԱՆՈՒՄ

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց

14 հուլիսի

Սփյուռքահայ ուսուցիչների

Ամենայն Հայոց Կաթողիկոսը «Վաչէ եւ Թամար Մանուկյան» մատենադարանում հանդիպում ունեցավ Հայաստանում վերապատրաստման դասընթացներին մասնակցող սփյուռքահայ 62 ուսուցչի հետ:

Հանդիպմանը Քրիստոնեական դաստիարակության կենտրոնի տնօրեն Վարդան եպս Նավասարդյանը ողջունեց եւ բարի գալուստ մաղթեց 14 երկրի հայկական կրթական հաստատությունների ուսուցիչներին՝ հույս հայտնելով, որ Ամենայն Հայոց Հայրապետի օրհնությամբ նրանք նոր լիցքերով կշարունակեն ուսուցչի վեհ առաքելությունը:

գնահատում ուսուցիչների՝ նոր սերնդի դաստիարակության եւ կրթության գործում բերած նվիրյալ ծառայությունը, եւ իր սպասումն է, որ ուսուցիչները, հայագիտական առարկաներ դասավանդելուց զատ, երիտասարդ սերնդին հաղորդ դարձնեն նաեւ ազգային, հայրենական եւ համայնքային կյանքի իրողություններին, նրանց առիթ ընձեռեն ներգրավվելու տարբեր ծրագրերում եւ այդպիսով մասնակից դառնալու ազգային կյանքին: Վեհափառը հաստատեց, որ դա է հայրենասեր, ազգասեր եւ նախանձախնդիր սերունդ կրթելու ճանապարհը:

Այնուհետեւ հայագիտական առարկաներ դասավանդող սփյուռքահայ ուսուցիչներին իր օրհնությունն ու պատգամը բերեց Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը: Նորին Սրբությունն ուրախություն հայտնեց, որ Հայաստանում սփյուռքահայ ուսուցիչների վերապատրաստման դասընթացները շարունակվում են, եւ ավելի մեծ թվով ուսուցիչներ են մասնակցում դրանց: Վեհափառ Հայրապետը վերհիշեց, որ առաջին տարիներին վերապատրաստման դասընթացները կազմակերպվում էին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում՝ ՀՀ կրթության եւ գիտության նախարարության հետ համատեղ:

Նորին Սրբությունն ընդգծեց, որ բարձր է

Հայոց Կաթողիկոսը հավելեց, որ միայն հայրենիքի նկատմամբ սեր, ապագայի հանդեպ հավատք եւ տեսիլք ունեցող անհատը կարող է հաղթահարել կյանքի բոլոր դժվարությունները եւ վստահություն հայտնեց, որ ուսուցիչները դասընթացի ավարտին իրենց երկրները կվերադառնան ոչ միայն նոր գիտելիքներով եւ փորձառությամբ, այլեւ՝ հոգեւոր-ազգային ապրումներով խանդավառված եւ ներշնչված ազատ ու անկախ հայրենիքի իրողությամբ:

Ավարտին Ամենայն Հայոց Կաթողիկոսն արդյունավոր ընթացք ցանկացավ դասընթացներին՝ մաղթելով, որ բարին Աստված ուսուցիչներին զորացնի իրենց կարեւոր առաքելության մեջ:

15 հուլիսի

«Ֆրեսկո» փառատոնի կազմակերպիչներին

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց արդի արվեստի եւ հոգեւոր ֆիլմերի «Ֆրեսկո» միջազգային փառատոնի կազմակերպիչներին՝ գլխավորությամբ Մայր Աթոռի եկեղեցական հայեցակարգային հարցերի գրասենյակի պատասխանատու, փառատոնի հոգեւոր խորհրդատու Բագրատ եպս Գալստանյանի եւ Մայր Աթոռի ԶԴԿ-ի տնօրեն Վարդան եպս Նավասարդյանի:

Հանդիպման սկզբում Վարդան սրբազանն Ամենայն Հայոց Կաթողիկոսին ներկայացրեց «Ֆրեսկո» փառատոնի արձանագրած հաջողությունները՝ ուրախությամբ փաստելով նաեւ, որ այն անցկացվել է Հառիճավանքում, իսկ փակման հանդիսավոր արարողությունը կատարվել է Մայր Աթոռ Սբ Էջմիածնում:

Ապա Նորին Սրբությանն իրենց երախտագիտության խոսքն ուղղեցին փառատոնի կազմակերպիչները՝ շնորհակալություն հայտնելով աջակցության համար:

Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր հայրական օրհնությունն ու պատգամը փոխանցեց «Ֆրեսկո» փառատոնի կազմակերպիչներին՝ կարեւորելով վերջինիս նպատակը՝ հոգեւոր-մշակութային երկխոսության միջոցով հանրության մեջ նպաստել սիրո, համերաշխության ու մարդասիրական արժեքների ամրապնդմանը եւ հոգեւոր արժեքների տարածմանը:

Նորին Սրբությունը ողջունեց երիտասարդության դերակատարությունը փառատոնի կազմակերպման գործում, ինչպես նաեւ այն, որ փառատոնը հնարավորություն էր ընձեռում սոցիալական խոցելի խավերի ներկայացուցիչներին մասնակից դառնալու միջոցառումներին եւ կարեւորեց հանրության կյանքում հոգեւոր-բարոյական արժեքների զորացմանն ուղղված նման նախաձեռնությունների իրականացման անհրաժեշտությունը:

Նորին Սրբությունը բարի ընթացք մաղթեց փառատոնին եւ վստահություն հայտնեց, որ այն իր ծանրակշիռ եւ ուրույն տեղը կգրավի ոչ միայն Հայաստանի, այլեւ միջազգային մշակութային կյանքում:

19 հուլիսի

Իսպանիայի Կաթոլիկ Եկեղեցու ուխտավորներին

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Իսպանիայի Կաթոլիկ Եկեղեցու թեմերի միջեկեղեցական հարաբերությունների ներկայացուցիչներին եւ ուխտավորներին՝ ուղեկցությամբ Մադրիդի եպիսկոպոսական ժողովի գլխավոր քարտուղար, Մադրիդի կարդինալի օգնական եպիսկոպոս Խուան Անտոնիո Մարտինեսի:

Մադրիդի հոգեւոր հովիվ Շնորհք աբդ. Սարգսյանը, Ամենայն Հայոց Հայրապետին ներկայացնելով ուխտավորներին, նշեց, որ քույր Եկեղեցու ներկայացուցիչների համար շատ կարեւոր է Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի ոգեկոչման տարում Մայր Աթոռ Սբ Էջմիածնում գտնվելը:

Երախտագիտության խոսք ասաց նաեւ եպիսկոպոս Խուան Անտոնիո Մարտինեսը, ով ընթերցելով Մադրիդի եպիսկոպոսական ժողովի գրությունը՝ ընդգծեց, որ այս օրն Իսպանիայի Կաթոլիկ Եկեղեցու ուխտավորների համար մշտապես պիտի հիշվի, քանի որ նրանք հաղորդվելու են Հայ Եկեղեցու նվիրական արժեքներին եւ Մայր տաճարում մասնակցելու են Պատարագի արարողությանը:

Գարեգին Բ Ամենայն Հայոց Հայրապետն ուխտավորներին բերեց իր գնահատանքի եւ օրհնության խոսքը եւ գոհունակությամբ շեշտեց այն, որ քույր Եկեղեցիների հոգեւորական եւ աշխարհական ուխտավորները հայ ժողովրդի համար նվիրական տարում որոշում են կայացնում ուխտի գնալ Հայաստան եւ Մայր Աթոռ Սբ Էջմիածին՝ իրենց հարգանքը բերելու ցեղասպանության ենթարկված հայ նահատակներին, ինչպես նաեւ բոլոր այն անձանց, ովքեր ի սեր Քրիստոսի՝ կամավորաբար հանձն առան մարտիրոսության սուրբ պսակը:

Վերհիշելով Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի առիթով Վատիկանում Հռոմի Սրբազան Քահանայապետ Ֆրանցիսկոս Պապի մատուցած սուրբ եւ անմահ Պատարագի արարողությունը՝ Նորին Սրբությունն ընդգծեց, որ սուրբ նահատակները բոլորին են պատկանում, քանի որ նրանք հավատքի վկաներն են եւ պանծացնում են Հիսուս Քրիստոսի ուսմունքի հիման վրա կառուցված Եկեղեցիները:

Հանդիպմանը ներկա էր Մայր Աթոռ Սբ Էջմիածնի միջեկեղեցական հարաբերությունների բաժնի տնօրեն Շահե վրդ. Անանյանը:

Շարունակությունը՝ էջ 2

Սկիզբը՝ էջ 1

24 հուլիսի

Հայաստանում Եվրոպական միության պատվիրակության ղեկավարին

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց ՀՀ-ում Եվրոպական միության պատվիրակության ղեկավար, դեսպան Տրայան Հրիսթեային:

Առաքելությունն ավարտելու կապակցությամբ Մայր Աթոռ այցելած Եվրոպական միության պատվիրակության ղեկավարը Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հետ ունեցած համագործակցության համար շնորհակալություն հայտնեց Նորին Սրբությանը՝ ներկայացնելով անցած չորս տարվա ընթացքում Հայաստանի կյանքի տարբեր ոլորտներում իր ծավալած գործունեությունը:

Դեսպանը մասնավոր անդրադարձ կատարեց համընդհանուր արժեքների պահպանության ու ամրապնդման, մարդու իրավունքների պաշտպանության գործում ԵՄ պատվիրակության գործադրած ջանքերին՝ նշելով, որ դրանց է ուղղված նաեւ Հայոց Եկեղեցու առաքելությունը:

Վեհափառ Հայրապետը Հայաստանին բերած ծառայության համար իր գնահատանքը հայտնեց պրն Տրայան Հրիսթեային՝ գոհունակությամբ փաստելով ԵՄ-ի՝ երկրին ցուցաբերվող զորակցությունը, եւ ընդգծեց հոգեւոր-բարոյական արժեքների զորացման կարեւորությունը, որոնցով հնարավոր պիտի լինի հաղթահարել հայրենիքի եւ ժողովրդի առջեւ ծառացած բոլոր դժվարություններն ու կերտել բարօր կյանք:

Վերջում Վեհափառ Հայրապետը հետագա գործունեության մեջ հաջողություններ մաղթեց պրն Տրայան Հրիսթեային:

Խոսվեց նաեւ ՀՀ-ԵՄ հարաբերությունների եւ Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ կարգավորման խնդրի մասին:

Գեւորգյան հոգեւոր ճեմարանի 2014-2015 թթ. ուսումնական տարվա փակման հանդիսությունը Մայր Աթոռում

Հուլիսի 20-ին Մայր Աթոռ Սբ Էջմիածնի Գեւորգյան հոգեւոր ճեմարանի հանդիսությունների դահլիճում, օրհնությամբ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, տեղի ունեցավ ճեմարանի 2014-2015 թթ. ուսումնական տարվա հանդիսավոր փակումը:

Տերունական աղոթքից, Հայաստանի Հանրապետության եւ ճեմարանի օրհներգերից հետո 2014-2015 թթ. ուսումնական տարին ամփոփեց Մայր Աթոռի հոգեւոր-կրթական հաստատությունների վերատեսուչ, Գեւորգյան ճեմարանի տեսուչ Գեւորգ եպս Սարոյանը:

Սրբազանն անդրադարձավ ուսումնական անցած տարվա ընթացքում ճեմարանի մշակութային եւ քարոզչական, սոցիալական, գիտա-մանակավարժական գործունեությանը, տարբեր հոգեւոր հաստատությունների եւ ճեմարանի միջբուհական համագործակցությանը, գրահրատարակչական հետազոտություններին եւ «Սերմնացան» մատենաշարի արձանագրած հաջողություններին:

Ճեմարանի նկատմամբ հայրական հոգածություն ցուցաբերելու համար շնորհակալություն հայտնելով Ամենայն Հայոց Կաթողիկոսին՝ նա ասաց. «Այս լույսի ներքո Գեւորգյան հոգեւոր ճեմարանը հայ իրականության մեջ պետք է լինի նաեւ այն անմատույց ամրոցն ու լուսավոր փարոսը, որն անաղարտ կպահի հայագիտության դարավոր ավանդները եւ մշտավառ՝ լուսավորչյան կանթեղը»:

Այնուհետեւ ամփոփելով հանդես եկան ճեմարանի առանձին սաներ, իսկ երգչախումբը՝ դեկավարությամբ ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ Ռուբեն Ասատրյանի, կատարեց հոգեւոր եւ ազգային երգեր:

Ցերեկույթը եզրափակվեց Տաթեւ արք. Սարգիսյանի խոսքով: Սրբազանը, ներկաներին փոխանցելով Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությունը, գնահատանք հայտնեց ճեմարանի տեսչական եւ դասախոսական անձնակազմի հոգեւոր եւ աշխարհիկ ներկայացուցիչներին՝ անցած տարում ներդրած ջանքերի եւ կատարած աշխատանքների համար: Սրբազանը խոսեց ճեմարանում ուսանած լուսեղեն կերպարների՝ հայ ժողովրդի նշանավոր մտավորականների մասին եւ ճեմարանականներին հորդորեց շարունակել նրանց ուղեղնշած ճանապարհը:

Դիմելով ճեմարանի շրջանավարտ 26 սարկավագներին՝ Տաթեւ սրբազանն անդրադարձավ նվիրյալ հոգեւորականի կերպարին եւ մաղթեց, որ իրենց առաքելության ընթացքում Աստծո կողմից տրված շնորհները ծառայասիրության ոգով առատորեն բաշխեն մարդկանց:

Հանդիսությունը փակվեց Պահպանիչ աղոթքով եւ Հայրապետական մաղթերգով:

Շնորհաների հանձնման արարողություն Մայր Աթոռ Սբ Էջմիածնում

Հուլիսի 15-ին Մայր Աթոռ Սբ Էջմիածնում Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի նախագահությամբ տեղի ունեցավ պարգեւաբաշխության արարողություն:

Հայրենասիրական ու ազգօգուտ ծառայության, ինչպես նաեւ արվեստի եւ երաժշտության ոլորտում ունեցած ձեռքբերումների համար Հայաստանյայց Առաքելական Սբ Եկեղեցու «Սուրբ Սահակ - Սուրբ Մեսրոպ» պատվո բարձր շքանշաններ հանձնվեցին ՀՀ ժողովրդական նկարիչ, պրոֆեսոր Զախար Խաչատրյանին եւ ՀՀ ժողովրդական արտիստ, դաշնակահար, պրոֆեսոր Սվետլանա Նավասարդյանին:

Արարողությունը բացվեց Պարույր քհն. Ավետիսյանի ողջույնի խոսքով:

Զախար Խաչատրյանի կյանքին ու արժանաշատ վաստակին անդրադարձավ արվեստաբան Հրավարդ Հակոբյանը: Երեւանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի ռեկտոր Շահեն Շահինյանը խոսեց Սվետլանա Նավասարդյանի ազգանվեր գործունեության մասին՝ ներկայացնելով նաեւ կոնսերվատորիայի գիտական խորհրդի խոսքը:

Այնուհետեւ «Էջ Միածին ի Հօրէ» շարականի երգեցողության ներքո բերվեցին հայրապետական սրբատառ կոնդակները, որոնք ընթերցեցին Մայր Աթոռի եկեղեցական հայեցակարգային հարցերի գրասենյակի պատասխանատու Բագրատ եպս Գալստանյանը եւ Մայր Աթոռի ՔԴԿ տնօրեն Վարդան եպս Նավասարդյանը:

Տիար Զախար Խաչատրյանին ուղղված հայրապետական կոնդակում մասնավորապես նշված է. «...*Ճանաչում ենք Ձեզ անձնապես եւ քաջածանոթ ենք հայ գեղանկարչության շնորհաշատ մշակիր վաստակաշատ գործունեությանը: Ձեր երիտասարդությունն անցավ Երկրորդ համաշխարհային պատերազմի մարտադաշտերում, ուր Ձեր սերնդակիցների պես Դուք մասնակցություն բերեցիք ֆաշիզմի դեմ մեծ հաղթանակի կայացմանը՝ հանուն մեր երկրի ու հավատավոր ժողովրդի ապահովության: Պատերազմի ավարտին վերադառնալով հայրենիք՝ կրթություն ստացաք Երեւանի գեղարվեստի ինստիտուտում, ապա եւ Սանկտ Պետերբուրգի գեղանկարչության, քանդակագործության եւ ճարտարապետության ակադեմիայում՝ աշակերտելով ժամանակի մեծանուն գեղանկարիչներին եւ զորացնելով Ձեր գիտելիքներն ու աստվածապարգեւ կարողությունները: Ձեր անունն այսօր ճանաչված է ինչպես Հայաստանում, այնպես եւ մեր երկրի սահմաններից դուրս՝ որպես գեղարվեստի մեծ նվիրյալ եւ տաղանդավոր նկարիչ: Հայաստանի, Ռուսաստանի եւ բազմաթիվ այլ երկրների թանգարաններում ու ցուցասրահներում ներկայացված Ձեր ստեղծագործությունների միջոցով Դուք տասնամյակներ շարունակ մարդկանց փոխանցում եք Ձեր հոգու անկեղծ զգացումներն ու ապրումները: Ձեր արվեստը, որ մեծ ճանաչում ու պատիվ է բերել Ձեզ, գնահատված է Հայաստանի եւ Ռուսաստանի ամենաբարձր պարգեւներով ու կոչումներով: Ձեր հմտությունները Դուք ամենայն սիրով ու նվիրումով բաշխել եք նաեւ բազմահարյուր երիտասարդ նկարիչների՝ դասավանդելով ու վարչական պաշտոններ վարելով Խաչատուր Աբովյանի անվան Երեւանի պետական մանկավարժական համալսարանում:*

Մեզ համար առանձնակի գոհունակություն է գնահատել նաեւ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցուն մատուցած Ձեր ծառայությունները: Դուք ամենայն սիրով ու բծախնդրությամբ Ձեր կարողություններն ի սպաս եք բերել Սանկտ Պետերբուրգի հայկական եկեղեցիների նորոգության գործին՝ հանձն առնելով հնամենի սրբապատկերների վերականգնման բարդ ու պատասխանատու գործը: Ուրախ ենք, որ հարստացնելով Ձեր եկեղեցանվեր վաստակը՝ Դուք Մայր Աթոռ Սբ Էջմիածնին նվիրաբերեցիք Ձեր շնորհալի ձեռքով վրձնած՝ Սբ Մարիամ Աստվածածնի սրբապատկերը: Այսօր Ձեր բազմաթիվ աշխատանքներ, օծված ու նվիրագործված սրբալույս մյուռոնով, զարդարում են մեր եկեղեցիների խորանները, որոնց առջեւ աղոթքի են կանգնում մեր ժողովրդի զավակները՝ փառաբանելով Տիրոջ սբ անունը»:

Տիկին Սվետլանա Նավասարդյանին ուղղված հայրապետական կոնդակում ասվում է. «...*Այսօր ուրախ առիթ ունենք Մեր գնահատանքը բերելու Ձեզ՝ մեր երկրի ու ժողովրդի կյանքում Ձեր գովարժան վաստակի համար: Տակավին մանուկ հասակից Դուք Ձեր կյանքն ընծայեցիք երաժշտարվեստին եւ գիտակից նվիրումով, հետեւողական ու անդուլ ուսումնառությամբ զորացրեցիք աստվածատուր Ձեր շնորհներն ու կարողությունները Երեւանի եւ Մոսկվայի պետական կոնսերվատորիաներում: Մեր ժողովուրդն ի սկզբանե սիրեց դաշնամուրային բարձրաճաշակ Ձեր մատուցումները: Համաշխարհային երաժշտության գանձերը՝ Բախի, Մոցարտի, Բրամսի, Շոպենի, Արամ Խաչատրյանի եւ այլ մեծերի ստեղծագործությունները, Դուք ներկայացրեցիք յուրօրինակ վարպետությամբ ու Ձեզ հատուկ զգացմունքայնությամբ՝ վաստակելով մասնագետների բարձր գնահատանքը: Աստվածատուր Ձեր շնորհներով փայլեցիք աշխարհի հանրահայտ բեմահարթակներում եւ միջազգային մրցույթներում՝ արժանանալով պետական ու հասարակական բազմաթիվ կոչումների, պարգեւների ու մրցանակների՝ Ձեր անունն արժանիորեն արձանագրելով հայ երաժշտարվեստի պատմության մեջ: Մեծ է Ձեր ավանդը նաեւ երաժիշտների նոր սերունդ պատրաստելու շնորհակալ գործում: Երկար տարիներ դասավանդելով Երեւանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայում՝ Դուք Ձեր սաներին փոխանցում եք Ձեր վարպետությունն ու տարիների ընթացքում ամբարած գիտելիքները, նաեւ նրանց մատուցում աշխատասիրության ու երաժշտարվեստին անսակարկ նվիրումի Ձեր վառ օրինակը»:*

Կոնդակների ընթերցումից հետո Ամենայն Հայոց Հայրապետը, ի գնահատություն արվեստի անդաստանում բերած բազմարդյուն ծառայության, մեծանուն գործիչներին շնորհեց Հայ Եկեղեցու «Սուրբ Սահակ - Սուրբ Մեսրոպ» շքանշանները:

Պարգեւաբաշխության առիթով իրենց սրտի խոսքն ասացին նաեւ շնորհընկալները: Ս. Նավասարդյանը, հայրապետական պարգեւը նկատելով իբրեւ իր համեստ վաստակի շռայլ գնահատական, նշեց, որ հպարտ է հայ արվեստագետ եւ նման վիթխարի հին մշակույթի ժառանգորդ լինելու համար եւ ուրախ պիտի լինի իր փոքրիկ լուման ներդնելու այդ մշակույթի զարգացման եւ պահպանման գործում:

Իսկ Զ. Խաչատրյանը, Հայ Եկեղեցու պարգեւի համար շնորհակալություն հայտնելով Նորին Սրբությանը, անդրադարձավ իր կյանքում հավատի կարեւոր դերակատարությանը:

Հանդիսությունն ամփոփվեց Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնության խոսքով:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում տեղի ունեցավ «Եղիցի լույս» մրցանակի հանձնման հանդիսությունը

Հուլիսի 16-ին Մայր Աթոռ Սբ Էջմիածնի Գեւորգյան հոգեւոր ճեմարանի հանդիսությունների դահլիճում, նախագահությամբ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, տեղի ունեցավ «Ոսկե ծիրան» միջազգային ամենամյա կինոփառատոնի առիթով Հայաստանյայց Առաքելական Սբ Եկեղեցու սահմանած «Եղիցի լույս» մրցանակը 2015 թ. շնորհվում է հայ ժողովրդի տաղանդաշատ զավակին:

Ապա Ամենայն Հայոց Հայրապետը կինոռեժիսոր Ռոբեր Գեղիգյանին հանձնեց «Եղիցի լույս» մրցանակը:

Շնորհակալական խոսքով հանդես եկավ մրցանակակիրը. «Ես շատ շոյված եւ երջանիկ եմ այս մրցանակի համար, հատկապես այն եւ մարդասիրական արժեքների քարոզչության եւ համաշխարհային կինոարվեստում մեծ վաստակի համար Հայաստանյայց Առաքելական Սբ Եկեղեցու սահմանած «Եղիցի լույս» մրցանակը 2015 թ. շնորհվում է հայ ժողովրդի տաղանդաշատ զավակին:

Ապա Ամենայն Հայոց Հայրապետը կինոռեժիսոր Ռոբեր Գեղիգյանին հանձնեց «Եղիցի լույս» մրցանակը:

Շնորհակալական խոսքով հանդես եկավ մրցանակակիրը. «Ես շատ շոյված եւ երջանիկ եմ այս մրցանակի համար, հատկապես այն

քին. Կարապետյանը եւ Մայր Աթոռ Սբ Էջմիածնի հոգեւոր-կրթական հաստատությունների վերատեսուչ, Գեւորգյան հոգեւոր ճեմարանի տեսուչ Գեւորգ եպս Սարոյանը:

Այնուհետեւ խոսք ասաց փառատոնի հիմնադիր տնօրեն Հարություն Խաչատրյանը՝ երախտագիտությամբ անդրադառնալով արվեստի նկատմամբ Վեհափառ Հայրապետի ցուցաբերած ուշադրությանը, Մայր Աթոռ Սբ Էջմիածնի եւ «Ոսկե ծիրան» փառատոնի միջեւ ձեւավորված սերտ համագործակցությանը, ապա ներկայացրեց մրցանակակրի վաստակը:

Մայր Աթոռի եկեղեցական հայեցակարգային հարցերի գրասենյակի պատասխանատու Բագրատ եպս Գալստանյանն ընթերցեց «Եղիցի լույս» մրցանակի հայրապետական վկայագիրը, որով հաստատվում է, որ «Ոսկե ծիրան» միջազգային կինոփառատոնի շրջանակներում հոգեւոր, մշակութային բանի համար, որ մրցանակի անունը՝ լույսը, ուղղակիորեն կապված է կինոարվեստի հետ: Ֆիլմն ինձ համար լույս է մթության մեջ, որը կարող է օգնել մարդկանց դուրս գալ խավարից, փոքրից գնալ դեպի մեծը... Այս է պատճառը, որ ես մշտապես այն համոզումն եմ ունեցել, որ կինոն ուղղակիորեն կապված է կրոնի հետ, եւ հավատացած եմ, որ փառատոնը, որի ժյուրիի նախագահն եմ այսօր, հարուստ է բազմաթիվ լույսերով»:

Գարեգին Բ Վեհափառ Հայրապետի օրհնությամբ տեղի ունեցավ նաեւ պարգեւաբաշխություն: Հայաստանյայց Առաքելական Սբ Եկեղեցու «Ս. Սահակ - Ս. Մեսրոպ» պատվո բարձր շքանշան հանձնվեց «Ոսկե ծիրան» միջազգային փառատոնի հիմնադիր տնօրեն Հարություն Խաչատրյանին՝ առ ի գնահատություն վերջինիս երկար տարիների վաստակյալ գործունեության:

«Էջ Միածինն ի Հօրէ» շարականի երգեցողության ներքո բերվեց հայրապետական սրբատառ կոնդակը, որն ընթերցեց Մայր Աթոռի վարչատնտեսական բաժնի տնօրեն Մուշեղ եպս Բաբայանը: Հայրապետական կոնդակում ասվում է. *«...Սիրելի՛ պրն Խաչատրյան, ճանաչում ենք Ձեզ անձնապես եւ քաջատեղյակ ենք Ձեր բեղմնավոր գործունեությանը: Դուք տասնյակ տարիներ նվիրյալ, ազգօգուտ աշխատանքով բարի ավանդ եք բերում հայ մշակույթի, մասնավորաբար հայ կինոյի զարգացման գործին՝ ի սպաս դնելով աստվածպարգեւ Ձեր շնորհներն ու կարողությունները: Ձեր հեղինակած ֆիլմերը բազմիցս մրցանակների են արժանացել միջազգային հեղինակավոր փառատոներում՝ պատիվ բերելով շնորհաշատ հայորդուդ: Ձեր վաստակն այսօր արժանապես գնահատված է պետական ու հասարակական բազմաթիվ պարգեւներով ու կոչումներով:*

Այսօր առիթ ունենք անդրադառնալու «Ոսկե ծիրան» միջազգային կինոփառատոնի հիմնադրման գործում Ձեր գնահատարժան վաստակին: Գոհունակություն է Հայրապետիս համար, որ Ձեր ջանքերով «Ոսկե ծիրանը» դարձել է մեր երկրի մշակութային կյանքի կարեւորագույն իրադարձություններից մեկը՝ արդյունավորապես ծառայելով հայ կինոարվեստի եւ հայ մշակույթի ճանաչմանն աշխարհում եւ հնարավորություն ընձեռելով արվեստասեր մեր ժողովրդի զավակներին հաղորդ դառնալու հայ եւ համաշխարհային կինոյի լավագույն ձեռքբերումներին»:

Այնուհետեւ Նորին Սրբությունը մեծարյալի կուրծքը զարդարեց Հայ Եկեղեցու պատվո բարձր շքանշանով: Այս առիթով երախտագիտության խոսք ասաց տիար Հ. Խաչատրյանը՝ հավաստիացնելով, որ պիտի շարունակի մնալ Մայր Աթոռի նվիրյալը եւ իր արվեստով ծառայել Հայոց Եկեղեցուն:

Հանդիսությունն ամփոփվեց Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնության խոսքով: Ողջունելով «Ոսկե ծիրան» միջազգային կինոփառատոնի՝ Մայր Աթոռ Սբ Էջմիածին ժամանած մասնակիցներին՝ Ամենայն Հայոց Հայրապետը նշեց. *«Գոհունակությամբ ենք անդրադառնում, որ կինոփառատոնը կայացած ավանդույթ է դարձել հոգեւոր-մշակութային մեր կյանքում: «Ոսկե ծիրանն» իր ուրույն տեղն ունի կինոաշխարհի բազմաթիվ փառատոների մեջ. այն հրաշալի հնարավորություն է ընձեռում կինոարվեստի շնորհաշատ ստեղծագործողներին՝ մասնագետների ու հանրության դատին ներկայացնելու իրենց աշխատանքի արդյունքները: Հիմնադրման օրվանից կինոփառատոնը ստանձնել է քաղաքակրթությունների ու մշակույթների երկխոսության մի բարձր առաքելություն՝ ծառայելով ընդհանուր բարիքի, մարդկանց ու ժողովուրդների միջեւ համերաշխության ու խաղաղության ամրապնդմանը. արժեքներ, որոնց ջատագովը մշտապես եղել է քրիստոնեական ավանդույթներով հարուստ մեր Հայաստան աշխարհը:*

«Ոսկե ծիրան» կինոփառատոնը նշանակալի իրադարձություն է հայաստանյան մեր իրականության մեջ, որ նոր շունչ ու ազդակ է հաղորդում հայ կինոարվեստին՝ հարթակ դառնալով նոր ստեղծագործությունների արարման, փորձի փոխանակման, նոր կապերի ու հարաբերությունների հաստատման: Կինոփառատոնի արձանագրած ձեռքբերումներն արդյունք են փառատոնի կազմակերպիչների ու գործակիցների նվիրյալ ու հետեւողական ջանքերի, հայրենի պետության աջակցության եւ մասնակիցների խանդավառ ներգրավվածության:

Ուրախ ենք, որ մեր Եկեղեցին եւս իր ներդրումն է բերում «Ոսկե ծիրան» միջազգային կինոփառատոնի աշխատանքներին»:

Նորին Սրբությունը նաեւ անդրադարձավ ֆրանսահայ կինոռեժիսոր եւ դերասան Ռոբեր Գեղիգյանին «Եղիցի լույս» մրցանակը հանձնելու փաստին՝ իր շնորհավորանքներն ու օրհնությունը բերելով մեծանուն ռեժիսորին.

«Տիար Գեղիգյանը, լինելով Հայոց ցեղասպանությունը վերապրած սերնդի շառավիղների ներկայացուցիչներից, 2015 թվականին, երբ ազգովի ոգեկոչում ենք Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցը, աշխարհին է ներկայացնում «Խենթ պատմություն» վերտառությամբ հեղինակային ֆիլմը, որը պատմում է Հայոց ցեղասպանության, դրա հետեւանքների եւ Թուրքիայի կողմից մինչ օրս տարվող ժխտողական քաղաքականության մասին: Ինչպես հեղինակն ինքն էլ նշում է, սա ոչ միայն Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցն է, այլեւ Թուրքիո պետության ժխտողականության 100-ամյակը:

Ռոբեր Գեղիգյանի անցած ստեղծագործական ուղին լավագույն վկայությունն է, որ հայ ժողովրդի ստեղծագործ ոգին անհնար է ոչնչացնել. ոչ մի արհավիրք եւ թշնամություն չի կարող սպանել մեր ժողովրդի հոգում կյանքի հանդեպ սերը, արդարության եւ ազատության համար պայքարի կամքը: Նա իր օրինակով հավաստում է, որ հայ ժողովուրդը հարությանը հավատացող ազգ է՝ այդ տեսիլքով ապրող եւ արարող»:

Վերջում Հայոց Հայրապետն իր օրհնությունը փոխանցեց փառատոնի բոլոր մասնակիցներին ու մրցանակակիրներին՝ ի խորոց սրտի աղոթքով նորանոր հաջողություններ մաղթելով «Ոսկե ծիրան» միջազգային կինոփառատոնին:

Քահանայական ձեռնադրություն Մայր Աթոռ Սբ Էջմիածնում

Հուլիսի 26-ին, օրհնությամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, Մայր տաճարում մատուցվեց Պատարագ, որի ընթացքում կատարվեց նաեւ քահանայական ձեռնադրություն:

Պատարագիչն էր Մայր Աթոռ Ս. Էջմիածնի քրիստոնեական դաստիարակության կենտրոնի տնօրեն Վարդան եպս Նավասարդյանը, որի ձեռամբ քահանայական ձեռնադրություն եւ օծում ստացավ յոթ սարկավագ:

Պատարագի ընթացքում Վարդան սրբազանը քահանայության կոչեց նորընծաներին՝ մյուռոնով օծելով նրանց ճակատներն ու ձեռքերը՝ վերջիններիս շնորհելով հոգեւոր նոր անուններ:

Հայկ սրկ. Թադեւոսյանը վերակոչվեց Թադեոս քհն., Արտակ սրկ. Վարդանյանը՝ Թորգոմ քհն., Ավետիս սրկ. Ասատրյանը՝ Արշավիր քհն., Վարդան սրկ. Չեյնալյանը՝ Պարգեւ քհն., Արման սրկ. Շոխիկյանը՝ Գրիգորիս քհն., Դավիթ սրկ. Ղարիբյանը՝ Կարապետ քհն., Արման սրկ. Մարտիրոսյանը՝ Աբրահամ քհն.:

Ձեռնադրության ավարտին նորընծա քահանաները ներկաներին փոխանցեցին իրենց անդրանիկ օրհնությունը:

Այնուհետեւ ձեռնադրող սրբազանը, քահանաների ձեռնադրության կապակցությամբ շնորհավորելով Ամենայն Հայոց Հայրապետին, հոգեւորականաց դասին, նորաձեռնադրյալների ծնողներին եւ հավատացյալ ժողովրդին, մասնավորաբար նշեց. «Հայաստանյայց Առաքելական Սբ Եկեղեցին դարձյալ իր՝ դարերով շարունակվող հաղթական արշավն է ուղենշում, եւ այս օրն այդ ընթացքի մեջ Հարության հաղթական խորհրդի եւ Աստծո ներկայության շնորհի մեծ վկայությունն է:

Հայոց Եկեղեցին, սիրելինե՛ր, հաստատված լինելով ճշմարիտ Վեմի՝ մեր Տեր Հիսուս Քրիստոսի ճշմարիտ խոսքի վրա, առաքելական շարունակականությամբ, սրբազան հայրապետների, վարդապետների, քահանաների եւ սարկավագների արյան վկայության, անսակարկ ինքնանվիրումի եւ ծառայության արդյունքում Տիրոջ մարմնի ծառայությամբ շարունակում է իր առաքելությունը...»:

Սրբազան հայրը, դիմելով նորընծա քահանա հայրերին, ընդգծեց, որ նրանց ծառայությամբ Աստված է գործելու, եւ հորդորեց, որ վերջիններիս սրտերը մշտապես մոտ լինեն իրենց հանձնված հոտին, ապրեն նրա կյանքով, հովվական խոսքի միջոցով իրենց հոտի վիշտը միսիթարության վերածեն, եւ ինչպես սրբազան հայրապետների ու առաքյալների, վարդապետների ու մեծանուն քահանաների պարագայում էր, այսուհետեւ նորաօծների միջոցով Տերը եւս պիտի գործի երկրի վրա:

Ապա «Ողջույնի» ժամանակ Մայր Աթոռի միաբանները բարձրացան ս. Խորան՝ շնորհավորելու քահանաներին եւ համբուրելու նրանց մյուռոնաբույր ճակատներն ու ձեռքերը:

Երեկոյան կատարվեց վեղարի տվչության արարողություն: Գրիգորիս քահանան կստանա վեղար եւ կհամալրի Մայր Աթոռի միաբանության շարքերը:

Քառասնօրյա պահեցողությունից եւ պատրաստության շրջան անցնելուց հետո նորընծաները ծառայության կկոչվեն Հայ Եկեղեցու տարբեր թեմերում եւ կառույցներում:

Հուլիսի 22-ին, հանդիսապետությամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, ներկայությամբ Հայաստանի Հանրապետության նախագահ Սերժ Սարգսյանի, տեղի ունեցավ Նոր Հաճն քաղաքի նորակառույց եկեղեցու օծման հանդիսավոր արարողությունը:

Ամենայն Հայոց Կաթողիկոսի ձեռամբ օծվեց Նոր Հաճն քաղաքի Սբ Ամենափրկիչ եկեղեցին

Եկեղեցին, որի հիմնարկեքը կատարվել էր 2011 թվականին, կառուցվել է տիար Գագիկ Ծառուկյանի բարերարությամբ: Եկեղեցու նախագծի հեղինակն է ՀՀ վաստակավոր ճարտարապետ Արտակ Ղուլյանը:

Ամենայն Հայոց Հայրապետին եւ ՀՀ նախագահին դիմավորեցին Կոտայքի թեմի առաջնորդ Առաքել արք. Քարամյանը, եկեղեցու բարերար Գագիկ Ծառուկյանը, Կոտայքի մարզպետ Կարապետ Գուլոյանը, Նոր Հաճնի քաղաքապետ Գագիկ Մաթեւոսյանը եւ բազում հայորդիներ:

Նորին Սրբությունը, իր հայրապետական օրհնությունը բաշխելով ներկաներին, հոգեւորականաց դասի ուղեկցությամբ մուտք գործեց նորակառույց եկեղեցի, ուր սկսվեց օծման կարգը:

Շարականների եւ սաղմոսների երգեցողությունից, աղոթքների ընթերցումից հետո խորան բարձրացվեց սրբալույս մյուռոնը, որով Ամենայն Հայոց Կաթողիկոսը կատարեց եկեղեցու ս. Սեղանի օծումը: Խորանի սյուների, մկրտության ավազանի եւ խորանի շուրթի օծումը կատարվեց ձեռամբ Երուսաղեմի հայոց Պատրիարքության դիվանապետ Արիս արք. Շիրվանյանի, Արարատյան հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Նավասարդ արք. Կճոյանի, Մայր Աթոռի արտաքին հարաբերությունների եւ արարողակարգի բաժնի տնօրեն Նաթան արք. Հովհաննիսյանի, Տավուշի թեմի առաջնորդ եւ Մայր Աթոռի եկեղեցական հայեցակարգային հարցերի գրասենյակի տնօրեն Բագրատ եպս Գալստանյանի եւ Մայր Աթոռի վարչատնտեսական բաժնի տնօրեն Մուշեղ եպս Բաբայանի:

Օծումից հետո կատարվեց եկեղեցու անվանակոչությունը: Վեհափառ Հայրապետը նորակառույց եկեղեցին կոչեց Ս. Ամենափրկիչ:

Այնուհետեւ Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն այս ուրախալի առիթով իր օրհնության պատգամը բերեց արարողության մասնակիցներին եւ Նոր Հաճնի բնակիչներին.

«Մեծ է բոլորիս ուրախությունն այսօր. Հայոց աստվածօրհնյալ երկնակամարի ներքո մի նոր աղոթատունը՝ Նոր Հաճնի շքեղաշուք Սբ Ամենափրկիչ այս եկեղեցին, իր դռներն է բացում հավատավոր մեր ժողովրդի առջեւ: Գոհություն ենք մատուցում երկնավոր Տիրոջը, որ հերթական անգամ Մեզ առիթն ու հնարավորությունն է ընձեռում կատարելու նորակառույց եկեղեցու օծման հոգենորոգ արարողությունը:

Միրելինե՛ր, եկեղեցին փրկության տաճարն է, որն այս կյանքի խռովահույզ ծովում մեզ առաջնորդում է դեպի խաղաղության հանգրվան՝ դեպի բաղձալի նավահանգիստը փրկության, որն Աստված է պարգեւում: Քրիստոնյայի երկրավոր կյանքի ճանապարհին ուղեւորություն է դեպի այդ օրհնյալ հանգրվանը, որին առանց Եկեղեցու առաջնորդության անհնար է հասնել: Ինչպես Ընդհանրական Եկեղեցու հայրերից սբ Կիպրիանոսն է ասում. «Չիք փրկութիւն յարտաքոյ Եկեղեցւոյ»: Յուրաքանչյուր նորաօծ եկեղեցու հետ մեր կյանքում բացվում է երկնային շնորհների եւ օրհնության մի նոր աղբյուր՝ զորացնելով առ Աստված հավատքը եւ առավել հաստատուն դարձնելով հույսը դեպի փրկություն: Փառք Տիրոջը, որ Սբ Ամենափրկիչ եկեղեցու միջոցով փրկագործ այս առաքելությունը գործանալու եւ արգասավորվելու է նաեւ Նոր Հաճն քաղաքում:

Մենք Աստծո նախախնամությունն ենք տեսնում, որ Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի նվիրական այս օրերին է օծվում եւ մեր ժողովրդի կյանքում իր առաքելությունն սկսում Նոր Հաճնի Սբ Ամենափրկիչ եկեղեցին: Հաճնը պատմական Կիլիկիայի ծաղկուն քաղաքներից էր, որի հայ բնակչությունը՝ շուրջ 30.000 մարդ, հարյուր տարի առաջ տարհանվեց եւ աքսորվեց դեպի Դեր Զոր, որտեղ նրանց մեծ մասը դաժանաբար կոտորվեց: Փրկվածները վերադարձան իրենց հայրենի բնաշխարհ, ձեռնամուխ եղան վերականգնելու իրենց տները, շարունակելու իրենց խաղաղ կյանքը, սակայն 1920 թ. կրկին հայտնվեցին բնաջնջման սպառնալիքի առջեւ: Քեմալական գերակշիռ ուժերի դեմ 8 ամիս շարունակվեց Հաճնի հերոսամարտը: Եվ հատկանշական է, որ քաղաքի ինքնապաշտպանությունը գլխավորում էր Հաճնի արիասիրտ առաջնորդ Պետրոս եպս Սարաճյանը, ով Քրիստոսի օրինակին հետեւելով՝ պատրաստ էր իր կյանքը տալու հանուն իր հոտի փրկության: Քաջարի հայորդիք՝ հավատարիմ իրենց հայրենիքին ու հավատքին, աղոթքը շրթներին, կյանքի գնով պաշտպանում էին հայրենի սրբությունները: Շնորհիվ ինքնապաշտպանության՝ փրկվեցին մեր ժողովրդի շատ զավակներ, իսկ տասնամյակ անց հաստատվեց Նոր Հաճն ավանը, որն ընդարձակվել, քաղաք է դարձել՝ վկայելով մեր ժողովրդի վերածնունդը եւ հավատքով նորոգվող կյանքը:

Այսօր Նոր Հաճնում վեր է հառնել եւ մեր աղոթքները երկինք է բարձրացնում Սբ Ամենափրկիչ եկեղեցին, որի օծման այս հոգեւոր եւ լուսավոր օրը Մեր միտքն են գալիս առաքյալի աստվածաշունչ խոսքերը, թե «...ամենայն ոք, որ Տիրոջ անունը կանչի, կփրկվի» (Հռոմ. Ժ 13): Այս հավատքով մեր ժողովուրդը դիմակայել է պատմության փորձություններին, ի զորու եղել վեր հառնելու մահվան ճիրաններից եւ նոր կյանք կառուցելու: Հայոց ցեղասպանությունից հետո աշխարհով մեկ սփռված հայությունը, Առաքելական մեր Սբ Եկեղեցու շուրջ համախմբված, կարողացավ պահպանել ազգային իր դիմագիծը, Աստծո անունը կանչելով՝ հաղթահարեց նեղությունները եւ հավատաց իր լուսավոր ապագային: Այսօր, երբ ազատ է մեր հայրենիքը, երբ նոր շունչ է առնում մեր հոգեւոր եւ ազգային կյանքը, մեզ առավել եւս պիտի միավորի մեր հավատքը, որպեսզի մեր ամեն կարելիությամբ շենացնենք մեր երկիրը ու պայծառ պահենք մեզ՝ դեպի փրկություն առաջնորդող մեր Սբ Եկեղեցին:

Հավատում ենք, որ Ամենափրկիչ՝ մեր Տիրոջ սբ անունը կրող այս նորաշուք եկեղեցին միշտ լեցուն պիտի լինի հավատացյալներով եւ ձեր աղոթքներով, ձեր արդար, քաջ ու դրվատելի գործերով, եւ ձեր հավատավոր ընթացքով Աստծո շնորհներն ու օրհնությունը պիտի առատանան մեր կյանքում»:

Այնուհետեւ իր բարձր գնահատանքը բերեց տեր եւ տիկին՝ Կոլյա եւ Ռոզա Ծառուկյաններին եւ նրանց զավակին՝ Գագիկ Ծառուկյանին, որոնց ազնիվ հանձնառություններով հայրենի երկրում վեր խոյացավ վեցերորդ եկեղեցին: Բարձր գնահատելով Ծառուկյան ընտանիքի եկեղեցաշեն գործունեությունը եւ Հայ Եկեղեցուն մատուցած օգտաշատ ծառայությունները՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսը հայրապետական սրբատառ կոնդակով տեր եւ տիկին՝ Կոլյա եւ Ռոզա Ծառուկյաններին շնորհեց Հայաստանյայց Առաքելական Սբ Եկեղեցու «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» պատվո բարձրագույն շքանշանը:

Շքանշանի հանձնումից հետո Հայոց Հովվապետը նվիրյալ ծառայության համար իր օրհնությունը փոխանցեց Կոտայքի թեմի առաջնորդ Առաքել արք. Քարամյանին եւ հոգեւոր դասին, ինչպես նաեւ իր գնահատանքը բերեց եկեղեցու ճարտարապետ Արտակ Ղուլյանին, շինարարներին եւ բոլոր նրանց, ովքեր իրենց մասնակցությունն են բերել հոյակերտ եկեղեցու կառուցման եւ բարեզարդման աշխատանքներին:

Վերջում Նորին Սրբությունը նորակառույց եկեղեցուն նվիրեց Տիրոջ խաչելության պատկեր:

Արարողությանը ներկա էին ՀՀ պետական այրեր, ԱԺ պատգամավորներ, օտարերկրյա դիվանագիտական առաքելությունների ներկայացուցիչներ, մշակույթի գործիչներ եւ բազում ուխտավորներ:

Համահայկական 6-րդ խաղերի ջահի օրհնություն Մայր Աթոռ Սբ Էջմիածնում

Հուլիսի 27-ին եկեղեցականների թափորը Մայր տաճարի զանգերի դողանչների ներքո, հանդիսապետությամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, Տրդատակամարի մոտից շարժվեց դեպի Բաց խորան:

Մայր տաճարի երգչախումբը կատարեց ՀՀ պետական օրհներգը, որից հետո օրվա առիթով բացման խոսք ասաց ՔԴԿ-ի տնօրեն Վարդան եպս Նավասարդյանը:

Վարդան սրբազանը, ողջունելով ներկաներին, նշեց, որ օրը շատ խորհրդանշական է, քանի որ Հայոց ցեղասպանության ոգեկոչման 100-րդ տարում Սփյուռքից, Արցախից եւ Արեւմտյան Հայաստանից Համահայկական 6-րդ խաղերի ջահերն ուխտագնացությամբ բերվեցին՝ իմաստավորվելու համար Մայր Աթոռ Սբ Էջմիածնում վառվող ջահի միջոցով, եւ որ Նորին Սրբության կողմից օրհնվելիք ջահերը միության եւ հաղթանակի խորհրդանիշեր են:

Ապա մարզական մեկնաբան, հաղորդավար Սլավա Սարգսյանն անդրադարձավ միջոցառման նպատակին եւ համահայկական խաղերի պատմությանը՝ արարողության վայր հրավիրելով ԼՂՀ Շուշի քաղաքի Սբ Ղազանչեցոց, Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության աթոռանիստ Սբ Գրիգոր Լուսավորիչ եւ Աղթամարի Սբ Խաչ եկեղեցիներում վառված ջահերը տեղափոխող մարզիկներին:

Համահայկական 6-րդ խաղերի ջահակիրներն էին Բարսելոնի 1992 թվականի 25-րդ օլիմպիական խաղերի չեմպիոն, հրաձիգ Հրաչյա Պետիկյանը, Բարսելոնի 1992 թվականի 25-րդ օլիմպիական խաղերի չեմպիոն, ծանրորդ Իսրայել Միլիտոսյանը եւ 2015 թվականի 28-րդ համաշխարհային ունիվերսիադայի (ուսանողական) խաղերի չեմպիոն, մարմնամարզիկ Արթուր Թովմասյանը:

Ապա հաղորդավարն ամբիոնի մոտ հրավիրեց Համահայկական խաղերի համաշխարհային կոմիտեի նախագահ, ՀՀ վերահսկիչ պալատի նախագահ Իշխան Զաքարյանին: Վերջինս ընդգծեց Համահայկական խաղերի անցկացման կարեւորությունը՝ ներկայացնելով նշանաբանը՝ «Միասնություն սպորտի միջոցով»:

Իշխան Զաքարյանի ելույթից հետո Սլավա Սարգսյանը Բաց խորանի հարթակի մոտ հրավիրեց համահայկական ջահի ջահակիր մարզիկ, 1988 թվականի Սեուլի 24-րդ օլիմպիական խաղերի չեմպիոն, ծանրամարտիկ Օգսեն Միրզոյանին: Երեք ջահակիրներն իրենց ջահերն իրար միացրին, եւ Օգսեն Միրզոյանը վառեց համահայկական ջահը:

Հավարտ ջահը վառելու արարողության, նախագահությամբ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, միասնական՝ Տերունական աղոթքով սկսվեց համահայկական ջահի օրհնության կարգը:

Վերջում ներկաներին իր հայրապետական պատգամը փոխանցեց Գարեգին Բ Վեհափառ Հայրապետը. *«Ուրախ ենք այսօր Մայր Աթոռ Սբ Էջմիածնում՝ աստվածակառույց այս սրբավայրում, մեկտեղված տեսնել աշխարհասփյուռ հայության ներկայացուցիչներիդ, որ Հայաստան եք եկել ձեր մասնակցությունը բերելու Համահայկական խաղերին: Հայրական սիրով ողջունում ենք ձեզ՝ մեր ժողովրդի հոգեւոր նվիրական կենտրոնում եւ բերում Մեր օրհնությունն ամենքիդ: Սրտի գոհունակությամբ ենք նկատում, որ արդեն ավանդական դարձած Համահայկական խաղերը տարեցտարի ընդլայնում են իրենց սահմաններն ու մասնակիցների թիվը:*

Մեզ բոլորիս համար մեծ խորհուրդ ունի, որ այսօր Անթիլիասից, Շուշիից եւ Աղթամարից բերված ջահերը Մայր Աթոռ Սբ Էջմիածնում միավորվում եւ բոցավառվում են մեկ ջահի մեջ: Ամեն հայ, որտեղ էլ ապրի, մկրտության դրոշմի հետ հոգում կրում է Սբ Էջմիածնի եւ Արարատի պատկերը՝ որպես հայ ինքնության անբաժանելի մաս եւ խորհրդանիշ մեր ժողովրդի միության ու միասնականության: Այսօր դուք Սբ Էջմիածնում եք, նայում եք Արարատին, եւ Մենք տարակույս չունենք, որ ձեր հոգում ջերմանում է որդիական սերը մեր Եկեղեցու եւ հայրենիքի հանդեպ: Տարակույս չունենք, որ Համահայկական խաղերը շարունակելու են ամրապնդել մեր ժողովրդի գավակների միասնականությունը՝ գորավոր այն ուժը, որի միջոցով պիտի կարողանանք հաղթահարել ազգային եւ հայրենական մեր կյանքում առկա խնդիրներն ու մարտահրավերները:

Հանդիսավոր այս օրը Համահայկական խաղերի բացումն սկսվում է լույսի փոխանցմամբ: Լույսը մաքրության ու սրբության խորհրդանիշն է: Այնտեղ, որտեղ լույս կա, խավարն ընկրկում է, չարիքը՝ պարտվում, եւ մեղքը՝ հալածվում: Ավետարանի խոսքի համաձայն՝ «լույսը խավարի մեջ լուսավորում է, եւ խավարը նրան չի նվաճում» (հմմտ. Հովհ. Ա 5):

Սիրելի՛ մարզիկներ, դուք ամենքդ բարձր առաքելություն ունեք՝ լինելու ուժեղ ոչ միայն մարմնով, այլեւ հոգով, լինելու լույսի, արդարության ու ճշմարտության ջահակիրներ, սիրո եւ համերաշխության պաշտպաններ: Թո՛ղ որ ձեր հոգեւոր լույսը միշտ պայծառ լինի մեր Տեր Հիսուս Քրիստոսով: Համահայկական խաղերի այս ջահը թո՛ղ զորացնի ձեր միասնությունը: Մարզական այս տոնախմբությունը լավագույն առիթներից է երիտասարդներիդ մտերմության եւ ընկերական կապերի ստեղծման համար»:

Նորին Սրբությունը նաեւ իր գնահատանքն ու օրհնությունը բերեց Համահայկական ամառային 6-րդ խաղերի կազմակերպիչներին եւ բոլոր նրանց, ում ջանքերով հնարավոր դարձավ այս խաղերի իրականացումը՝ հայցելով ամենազոր Տիրոջից բյուր օրհնություն եւ նորանոր հաջողություններ ազգանպաստ այս նախաձեռնությանը: Վեհափառ Հայրապետը նաեւ իր օրհնությունը փոխանցեց բոլոր մարզիկներին՝ մաղթելով նրանց ուժ ու կարողություն, մարզական նորանոր նվաճումներ ու հաղթանակներ՝ բարի երթ մաղթելով Համահայկական ամառային 6-րդ խաղերին՝ վստահություն հայտնելով, որ դրանցում բոլորն են հաղթելու, եւ այդ հաղթանակը հայ ժողովրդի միասնականության ամրապնդման մեջ է լինելու:

Արարողությանը ներկա էին Արմավիրի մարզպետ Աշոտ Ղահրամանյանը, Էջմիածնի քաղաքապետ Կարեն Գրիգորյանը, ՀՀ, ԼՂՀ եւ Սփյուռքի մշակույթի, կրթության, մարզական բնագավառի ներկայացուցիչներ, Մայր Աթոռի միաբանությունը եւ ուխտավոր հայորդիներ:

Նոր նշանակում

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հայրապետական տնօրինությամբ Բագրատ եպս Գալստանյանը նշանակվել է Տավուշի թեմի առաջնորդ:

[redacted]

(կենսագրություն)

Բագրատ եպս Գալստանյանը (ավազանի անունը՝ Վազգեն) ծնվել է 1971 թ. Գյումրիում: 1988-1994 թթ. ուսանել է Մայր Աթոռ Սբ Էջմիածնի Գեւորգյան հոգեւոր ճեմարանում: 1994 թ. ձեռնադրվել է սարկավագ: 1995 թ. գերազանցությամբ ավարտել է ճեմարանը՝ պաշտպանելով ավարտաճառ՝ «Խոսրով եպիսկոպոս Անձեւացու ժամակարգութեան մեկնութիւնն ու աստուածաբանութիւնը (նորագիւտ ձեռագրերով եւ մատենագիտական ուսումնասիրութեամբ)» թեմայով:

1995 թ. հուլիսի 23-ին ձեռնադրվել է կուսակրոն քահանա: 1996 թ. նշանակվել է «Էջմածին» պաշտոնական ամսագրի գլխավոր խմբագիր: Միեւնույն ժամանակ նշանակվել է նորահաստատ Քրիստոնեական դաստիարակության եւ քարոզչության կենտրոնի փոխտնօրեն՝ վարելով ուսուցիչների պատրաստման ծրագիրը Հայաստանի Արմավիր, Մասիս, Արտաշատ, Ապարան քաղաքներում եւ Երեւանի Ա-

մերիկյան համալսարանում: Հիմնադիր անդամն է քրիստոնեական առաջին՝ «Կանթեղ» հեռուստածրագրի: Գեւորգյան եւ Վազգենյան ճեմարաններում դասավանդել է սուրբ Պատարագի մեկնություն, շարականագիտություն եւ Ընդհանուր Եկեղեցու պատմություն առարկաները: 1996-1998 թթ., առկա պաշտոններին զուգահեռ, եղել է Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի գավազանակիրը: 1998-2000 թթ. սովորել է Անգլիայի Լիդզ քաղաքի համալսարանում եւ Մըրֆիլդի Սբ Հարության աստվածաբանական քոլեջում՝ մասնագիտանալով աստվածաբանական եւ հովվական ուսումնասիրության մեջ՝ ստանալով բակալավրի աստիճան: Միեւնույն ժամանակ եղել է Մեծ Բրիտանիայի հայոց թեմի Մանչեսթրի Ս. Երրորդություն եկեղեցու այցելու հովիվը: 1996-2000 թթ. եղել է Հայաստանում քրիստոնեության պետական կրոն հռչակման 1700-ամյակի կազմակերպման կենտրոնական մարմնի անդամ: 2000 թ. նշանակվել է Սեւանի Վազգենյան դպրանոցի տեսուչ: 2002 թ. պաշտպանել է «Հիւանդաց օծման խորհուրդի խնդիրը Հայ Եկեղեցում» թեմայով վարդապետական թեզը եւ ստացել մասնավոր վարդապետության 4 աստիճանները: 2002 թ. զուգահեռ նշանակվել է նաեւ Մայր Աթոռի տեղեկատվական համակարգի խորհրդի նախագահ, եղել է «Շողակաթ» հեռուստաընկերության տնօրենների խորհրդի նախագահ եւ վարել հեղինակային՝ «Ճանաչենք Ավետարանը» հեռուստահաղորդումների շարքը:

2002-ին զուգահեռաբար նշանակվել է Արագածոտնի թեմի առաջնորդական տեղապահ: 2003 թ. մայիսին ընտրվել է Հայ Եկեղեցու Կանադայի հայոց թեմի առաջնորդ: 2003 թ. հունիս 22-ին ձեռնադրվել է եպիսկոպոս: 2008-ին երկրորդ անգամ վերընտրվել է Կանադայի հայոց թեմի առաջնորդ: 2012 թ. սեպտեմբերի 21-ին Մոնրեալի Քոնքորդիա համալսարանում պաշտպանել է աստվածաբանության եւ կենսաբանական բարոյագիտության դոկտորական թեզ՝ «Հայաստանի առողջապահական համակարգը. պատմական, սոցիալական եւ աստվածաբանական եզրաշերտը, անցյալը, ներկան եւ ապագայի զարգացման հեռանկարը» խորագրով: 2013 թ. նշանակվել է Մայր Աթոռ Սբ Էջմիածնի եկեղեցական հայեցակարգային հարցերի գրասենյակի տնօրեն:

Հրատարակել է աստվածաբանական, հրապարակախոսական, քարոզխոսական, մշակութային բազմաթիվ հոդվածներ, «Հիւանդաց օծման խորհուրդի խնդիրը Հայ Եկեղեցում» աշխատությունը, «Խոհեր» հոգեւոր-խորհրդածական գրքույկը:

2013 թ. արժանացել է Անգլիայի Եղիսաբեթ Բ թագուհու ադամանդյա հոբելյանի մեդալին:

Լրատվական նյութերը՝
ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ

ԵՂԻԾԵ ՉԱՐԵՆՑ

ԸՆԿԵՐ ԱԼԻՆ ԵՒ ԱՐԽԱԴԱՇ ԼԵՆԻՆԸ

(«ԼԵՆԻՆՆ ՈՒ ԱԼԻՆ»)

Չարենցը ինչո՞ւ գրեց «Լենինն ու Ալին» պոեմը:

Ինչո՞ւ Լենինի մահվան լուրն այդպես ծանր տարավ Ալին, եւ ինչո՞ւ Չարենցը համաշխարհային պրոլետարիատի առաջնորդի մահվան թառանչը հնչեցրեց հատկապես թուրք աշխատավոր Ալիի անունից:

Լենինը մահացել է 1924 թ. հունվարի 21-ին: Այդ կապակցությամբ Չարենցը նույն թվականի հունվարի 23-ին Մոսկվայում գրեց «Լենին» սգերգը (տպ.՝ «Վերելք», 1924, թիվ 2-3): Ըստ Միքայել Մազմանյանի հուշերի՝ թույլտվությամբ Չարենցը ներկա է եղել Արհմիությունների տան սյունազարդ դահլիճում, որտեղ դրված էր Լենինի դագաղը:

Լենինի կերպարի անդրադարձով Չարենցը գրել է նաեւ «Ես եւ Իլյիչը» (1923, Թիֆլիս, տպ.՝ «Նորք», 1924, գիրք 4) պոեմը, ինչը ենթավերնագրել է «Մի էպիզոդ իմ ճանապարհորդությունից՝ կատարված Ուելսի ժամանակի մեքենայով դեպի 2500 թ.», «Բալլադ Վլադիմիր Իլյիչի, մուժիկի եւ մի զույգ կոշիկի մասին» (գրել է 1924-ին, տպ.՝ «Խորհրդային Հայաստան», 1925, թիվ 164, զետեղվել է «Երեք փոքրիկ պոեմ «Լենինի» շարքից» գրքում, 1925, Բեռլին, եւ «Ժողովածու պոեմների» (1927, Թիֆլիս) եւ «Երկեր» (1932, Երեւան) գրքերում:

Եվ ահա հաջորդում է «Լենինն ու Ալին» պոեմը:

Գրել է 1924 թ. նոյեմբերի 24-ին Տրապիզոնում (տպ.՝ «Խորհրդային Հայաստան», 1925, թիվ 17): Նույն թվականին Երեւանում պետհրատը լույս է ընծայել առանձին գրքով: Երկու դեպքում էլ ետգրության տեսքով Չարենցը պոեմին կցել է ծանոթություն. «Բ. Տ. Պոեմի նյութը վերցված է իրականությունից: Տրապիզոնի մեր համամիութենական հյուպատոսն ինձ պատմեց, որ Լենինի մահվան լուրը Տրապիզոն հասնելու օրը՝ կես գիշերին, իր մոտ է գալիս Ալի անունով մի թուրք նավաստի՝ իր վիշտն ու հարգանքը հայտնելու: Կարծում եմ՝ դեպքն արժանի է ավելի լավ պոեմի, քան սա»:

Այս պոեմը «Բալլադ...»-ի եւ «Լենին քեռին»-ի հետ մեկտեղ Չարենցը 1925 թ. առանձին գրքով տպագրել է Բեռլինում՝ «Երեք փոքրիկ պոեմ «Լենին» շարքից» վերնագրով:

«Լենինն ու Ալին» ընդգրկում է 202 տող, պահպանվել է ինքնագիրը, կան բնագրային տարբերություններ:

Հիմա տեսնենք, թե Չարենցը ինչու գրեց այս պոեմը:

Թո՛ւրքը, ով ցեղասպանություն էր իրականացրել, գրավել էր Չարենցի հայրենի քաղաքն ու սրի էր քաշել բնակիչներին, կախել էր հայոց առաջնորդներին, թուրքը, ում մարդասպան կերպարը Չարենցն ուրվագծել է բազմաթիվ գործերում («Դանթեական առասպել», «Մահվան տեսիլ» (1920, 1933), «Երկիր Նաիրի», առանձին բանաստեղծություններ), ահա այդ թուրքն ինչպե՞ս հանկարծ Չարենցի համար դարձավ դրական կերպար:

Լենինը ձեռք մեկնեց թուրքերին. Աթաթուրքը Լենինին վստահեցրեց, որ աջակից է համաշխարհային հեղափոխությանը: Լենինը թուրքերին տվեց զենք, տվեց ոսկի եւ օգնեց, որ ոտքի կանգնեն, Խորհրդային Հայաստանի համար նվաստացուցիչ պայմաններով կնքեց Կարսի պայմանագիրը եւ Թուրքիայի թելադրանքով Ադրբեջանին զիջեց Նախիջեւանն ու Արցախը: Լենինի համար Թուրքիան ավելի կարեւոր էր, քան Խորհրդային Հայաստանը, որ պատմական այդ իրադրությունից դուրս եկավ ոչնչացված:

Մուստաֆա Քեմալը վարեց շատ ճկուն քաղաքականություն: Հաճոյացավ ոչ միայն Լենինին, այլեւ նրա հակառակորդներին, ովքեր տեսնելով Ռուսաստան-Թուրքիա սերտացող քաղաքական դաշինքը՝ ամեն ինչով կաշառեցին Թուրքիային, որպեսզի պոկեն Ռուսաստանի հայտարարած համաշխարհային հեղափոխությունից: Արեւմուտքը վտանգ էր զգում՝ չլինի՞ Թուրքիան եւս դառնա խորհրդային մի հանրապետություն:

Եվ ահա Չարենցը Լենինի մահը ողբում է թուրք Ալիի միջոցով: Նյութի իրական հիմքը, Ալիի պարզ աշխատավոր լինելու հանգամանքն ավելի են սրում պոեմի շեշտադրումը: Լենինի մահը ողբում է ոչ թե հայ մարդը, հայ աշխատավորը, այլ թուրքը, ով էլ ողբով իր երախտիքն է հայտնում Թուրքիայի հանդեպ Լենինի դրսեւորած բարյացակամ վերաբերմունքի հանդեպ: Լենինը բարեկամի կերպար էր Թուրքիայի համար:

Այո՛, Չարենցն այս տարիներին (1922-1925 թթ.) պրոլետարական գաղափարախոսության արտահայտիչ էր, բայց ոչ երբեք ազգայինի զոհաբերման հաշվին, եւ դա այն դեպքում, երբ իր շուրջ Ն. Զարյանը, Ա. Վշտունին, Վ. Ալազանը եւ մյուսները փորձում էին ազգայինը ուրանալ որպես առաջ: 1926-ից նա պիտի փոխվեր, հետո հիասթափվեր, ապրեր ի՛ր եւ ի՛ր ժողովրդի ողբերգությունը ստալինյան հալածանքների պայմաններում եւ գրեր, թե ինչպես «ողձյալ այգաբացը» դարձավ «արյունալիճ կեսօր»:

Չարենցը հոգեբանորեն եւ գաղափարապես ապրեց բոլոր հեղափոխություններին բնորոշ երեք փուլերը, ինչն արտահայտվում է հետեւյալ բանաձեւով. խելոքները մտածում են, նվիրյալներն իրականացնում են, սրիկաները վայելում են: Չարենցն այն խելոքների հետ էր, ովքեր մտածում էին աշխարհը դրական ընթացքով փոխելու մասին, խոսքով ու գործով այն նվիրյալների շարքերում էր, ովքեր դուրս եկան հրապարակ եւ փոխեցին կյանքը, բայց երբ եկավ սրիկաների ժամանակը, ովքեր սրի քաշեցին խելոքներին ու նվիրյալներին եւ հեղափոխությունը ծառայեցրին ինչ-ինչ անհատների, Չարենցն արդեն նրանց դեմ էր:

Ահա «Լենինն ու Ալին» Չարենցը գրեց այն ժամանակ, երբ դեռ փորձում էր կյանքում արմատավորել հեղափոխության գաղափարները (չեմ ասում նվաճումներն ու ձեռքբերումները, այլ հենց գաղափարները):

Հիմա տեսնենք, թե ինչպես է Չարենցը գեղարվեստորեն մարմնավորել իր ասելիքը:

Սա, այն տարիների լեզվով ասած, ագիտացիոն պոեմ է (ագիտկա), այսինքն՝ քարոզչական պարզ երկ, ինչի համար էլ ընտրել է ժողովրդախոսակցական շատ հասարակ բարբառախառն լեզու, նույնքան պարզ պատում ու դիպաշար:

Չարենցն աշխարհը ներկայացնում է Ալիի պատկերացմամբ, ըստ որի՝ «Աշխարհի կենտրոնը - Մո՛սկովն է: Մոսկովը: // Մեկկայից էլ հի՛ն է: // Մոսկովից մեծ քաղաք - չի՛ք: - Քանի որ Մոսկովի միջին: // Ապրում է ինքը - Լենինը»:

Շարունակությունը՝ էջ 7

Ն. ԲԵՐԴՅԱԵՎ

ՊԱՐԱԴՈՔՍԱԼ ԲԱՐՈՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՌՈՒԹՅՈՒՆ

ՕՐԵՆՔԻ ԲԱՐՈՅԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍՏԵՂԾԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐՈՅԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՕՐԵՆՔԻ ԲԱՐՈՅԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Սկիզբը՝ թիվ 10-11, 13

Սոկրատեսից սկսած՝ հունական բարոյագիտությունն արդեն փորձում էր ազատագրվել հասարակության իշխանությունից եւ օրենքից, փորձում էր ներթափանցել անձի խղճմտանքի մեջ: Սոկրատեսի բարոյական գիտակցությունը բախվում է աթենքյան ժողովրդավարության հետ: Այն՝ որպես օրենքի, սոցիալական առօրեականության զոհ, տապալվում է,- das Man՝ «այդպես են ասում» հասարակությունները: Սոկրատեսը հռչակում է մարդկանցից ավելի Աստծուն հնազանդվելու սկզբունքը: Իսկ դա նշանակում է, որ Աստծուն, խղճմտանքին, ճշմարտությանը, ներքին մարդուն պետք է հնազանդվել ավելի շատ, քան հասարակությանը, քան սոցիալական առօրեականությանը, քան արտաքին օրենքին: Ներքնապես Սոկրատեսն օրենքի բարոյագիտությունից դեպի շնորհի բարոյագիտություն չի բարձրացել, ինչպես չեն բարձրացել ստոիկները: Բայց նա հսկայական քայլ է արել դեպի առաջ, դեպի անձի բարոյական ազատագրման ճանապարհը, դեպի խղճմտանքի բացահայտման ուղին անձի ներսում եւ ոչ թե հասարակության մեջ: Երբ Պլատոնը «Գորգիոս»-ում գրում է, թե լավ է ինքդ փորձես անարդարությունը, քան դա պատճառես ուրիշներին, նա արդեն բարոյական կյանքի եւ բարոյական արժեքների ծանրության կենտրոնը տեղափոխում է անձի խորքերը: Եվ շատ զարմանալի է, որ Պլատոնը հանգում է կոմունիզմին, որը մերժում է անձնավորությանը: Հունական գիտակցությունը երբեք վերջնականապես չի հաղթահարել անհատականության վրա քաղաք-պետության իշխանությունը: Այդ ազատագրումը տեղի է ունենում միայն քրիստոնեությամբ, որը նշանակում է անցում փրկաբանական շնորհի բարոյագիտության: Օրինադրական բարու ճնշումը մարդու կյանքի եւ աշխարհի վրա արտահայտվում է fiatjustitia, pereat-mundus ձեւակերպման մեջ *(Արդարությունը թող հաղթանակի, թեկուզ կործանվի ողջ աշխարհը - լատ.)*: Օրենքի բարոյագիտությունն ինքնին վերցրած՝ հետաքրքրվում է բարիով եւ արդարությամբ, բայց ոչ կյանքով, մարդով, աշխարհով: Այսքան է նրա սահմանը: Օրինադրական բարոյագիտության, սոցիալական առօրեականության եւ համապարտադիր բարոյագիտության հիմքի վրա առաջ է գալիս մարդու ճորտացումը պետությանն ու հասարակությանը, միապետի, ղեկավարի, հարուստի, ծանոթի նկատմամբ ճորտի վերաբերմունք, ինչպես նաեւ՝ ամբոխի, զանգվածների եւ մեծամասնության: Օրինադրական բարոյագիտության բարոյական դատողություններում մտածողը ոչ թե անձն է, ոչ թե մարդը, այլ սոցիալական առօրեականությունը, տոհմը, կլանը, դասերը, պետությունը, ազգը, ընտանիքը: Եվ ճշմարտության աստվածային սկիզբն ինքը փոխանցվում է սոցիալական առօրեականության կառույցներին: Օրինադրական, սոցիալական առօրեական բարոյագիտությունը գերապատվությունը տալիս է ոչ թե մարդուն, մարդկային որակներին, ստեղծագործողին, բարեպաշտին, տաղանդին, գիտնականին ու բանաստեղծին, այլ հիերարխիկ աստիճանին, իշանության կրողին, Եկեղեցու նվիրապետին, միապետին, ընտանիքի գլխավորին, ղեկավարին: Սրան է ահա առնչվում օրենքի



բարոյագիտության հիմնական խնդիրը: Օրենքի բարոյագիտությունը չի ճանաչում ներքին մարդուն. այն կարգավորում է արտաքին մարդու կյանքը մարդկային հասարակության նկատմամբ, հենվում է այն բանի վրա, ինչը ես կոչում եմ արտաքին հիերարխիզմ՝ ի տարբերություն ներքին հիերարխիզմի: Օրենքի բարոյագիտությունը կարող է լինել պահպանողական կամ հեղափոխական: Երկու դեպքում էլ այն ավտորիտար է եւ սոցիալական: Սոցիալական բարոյագիտությունն անհնարին է դարձնում նախագո եւ կուսական բարոյական գործողությունը: Անձի բարոյական գործողությունն ու գնահատականը պատված են սոցիալական խմբերի, ընտանիքների, դասակարգերի, կուսակցությունների, ուղղությունների, դավանանքների, կանխակալ գաղափարների շերտավորումներով, եւ այստեղ ազատ ու մաքուր բարոյական գաղափարների հնարավոր չէ հասնել: Բարոյական կյանքի մեծագույն խնդիրն այն է, որ հասնես մինչեւ նախագո, կուսական բարոյական գործողության՝ չպղծված սոցիալական ներշնչանքներով: Մեր բարոյական գործողություններում հսկայական դեր է խաղում պետությունը: Սակայն պետությունը ոչ միայն Աստծուց է, այլեւ սատանայից:

Անտիկ հեթանոսության եւ հուդայականության մեջ ճակատագրի եւ համաշխարհային բանականության նկատմամբ վերաբերմունքը պարադոքսալ էր: Հույնն ու հռոմեացին (ողբերգություն, ստոիցիզմ) հնազանդ էին ճակատագրին, քանզի ոչ ոք չկար, որ գանգատվեր դրանից: Հնագույն հրեաներն ընդվզեցին, կռվեցին հենց Աստծո հետ (Հոբ, մարգարեներ, սաղմոսներ): Աշխարհի վրա թագավորող միապետական իշխանության օրենքին հակադրեցին կա՛մ սառնասրտությունն ու հնազանդությունը, կա՛մ էլ ընդվզումն ու պայքարն Աստծո դեմ: Բայց մինչ այդ բարձրացել էին Նոյն ու մարգարեները, ողբերգակներն ու անտիկ իմաստունները: Կյանքի հիմնական գիծը ձեւավորվել էր օրենքի իշանության համաձայն: Հնագույն գրքերում, Մանուի օրենքներում *(հին հնդկական կրոնա-բարոյախոսական, իրավական նորմերի ժողովածու՝ կազմված Ք. ա. 3-րդ դարում - թարգ.)*, Աստվածաշնչում, Թալմուդներում:

Շարունակությունը՝ էջ 8

Դեյվիդ Խերդյանը եւ նրա բանաստեղծական ժառանգությունը



Սկիզբը՝ թիվ 13

Դեյվիդ Խերդյանի համար հայերի մասին ունեցած հիշողությունները չափազանց հզոր հուզական լիցք են պարունակում: Նրա առավել ուշագրավ եւ հուզիչ հուշն առնչվում է մի ծեր, հայազգի ծերունու: Ոմանք թերեւս կհիշեն, թե ինչպես էին առաջին հայ տարագիրները մուտք գործում հասուն տարիք: Այդ մարդիկ հաճախ մենակյաց էին, նրանցից շատերը՝ ամուրի: Նրանք այլեւս զուրկ էին սոցիալական կարգավիճակից, քանզի արդեն թոշակի տարիքում էին: Այդ հայազգի ծերունիները կտրված էին իրենց հայրենիքից: Հաճախ այդ վշտահար մարդիկ իրենց ժամանակն անց էին կացնում զբոսայգիների նստարաններում, հանրախանութների բաց վերնասրահներում կամ էլ հայկական սրճարաններում: «Դըթահ, Դըթահ» բանաստեղծության տիպի պոետական երկերում Խերդյանն այդ տարեց հայերին նույնացնում է ամերիկահայերի պահապան հրեշտակների հետ: Նրանք, բանաստեղծի պատկերմամբ, կարծես Աստծո խենթ գուշակներ լինեին, որոնց իմաստությունը թաղված էր նրանց համառ անհայտության մեջ.

Ծեր ու անանուն հայազգի մի մարդ
Ցերեկվա ժամին նստել էր հանդարտ
Աստծո տան մոտի մի նստարանի
Ու խորհում էր հարազատ ազգի
Ու մեր Տեր Աստծո սբոդված կապից:
Ամեն կիրակի հայ այդ ծերունին
Միանալվում էր մարդկանց ամբոխին
Խառնվում էր նա մարդկային խմբին
Ու դառնում էր նա անտեսանելի:
Ողջ շաբաթը նա զգոն էր ու արթուն,
Նա ուներ հագին հնամաշ շորեր,
Իսկ նրա դեմքին կար երանություն:
Զարմանում եմ ես, որ որոշ մարդիկ,
Ում հանդեպ տածում էի խղճմտանք գաղտնի,
Պահապաններն էին այս կենսակերպի
Եվ առհասարակ մարդկային կյանքի:

«Հարգանքի տուրք Նոյանային»

Հայազգի ծերունիներն աննկատ սողոսկում են այն վայրը, որը նրանց պնդմամբ՝ իրենցն է: Այսպիսով մարդն ու տեղանքը մեկ միասնություն են դառնում: Կտրված լինելով իրենց հարազատ հողից եւ տեսչալով անանուն խորշերում ստանալ համընդհանուր երազանքի իրենց մասնաբաժինը՝ այս մարդիկ վերածվում են «հրեշտակների», որոնք անցում են կատարում տարագիրների առաջին սերնդից դեպի հաջորդող սերունդները: Նրանց ազդեցությունը նրանում չէր, թե ի՞նչ են ասել կամ արել: Կարեւորը նրանց խորհրդածություններն էին Աստծո եւ համաերկրացիների սրբազան կապի վերաբերյալ: Վշտից համրացած այդ մարդիկ մի «կամուրջ» էին ստեղծել ապագա սերունդների համար: Նրանք ոչ միայն չկորցրեցին իրենց կապը եկեղեցու եւ բնության հետ, այլեւ ստեղծեցին մի լուսապայծառ տարածություն, որտեղ ներդաշնակվում էին փոփոխություններն ու կայունությունը:

Ականատեսների մասին այլ պոետական երկերում Դեյվիդ Խերդյանը ներկայացնում է, թե ինչպե՞ս է ժամանակը միմյանցից օտարում սերունդներին, ինչպես օրինակ՝ «Միջին տարիքի հայորդին» բանաստեղծության մեջ: Այստեղ լռությունը կանխատեսում է մշակութային պառակտումն այն ժամանակ, երբ նոր ժամանած հայ գաղթականները հուզված դեգերում էին իրենց պես լուռ փողոցներում: Հայ տարագիրները ֆրուստրացիայի են ենթարկվում մանուկների անսանձ կլանվածության պատճառով: Երեխաները ուշադրություն չեն դարձնում մեծերի խոսակցություններին, որոնց թեման հարազատ մշակույթն էր: Նրանք զայրանում են առկա սահմանափակումների պատճառով: Այստեղ եւս ժամանակը բերում է իր ուշացած պտուղները. «մեծացած երեխաները» փնտրում են իրենց մեծերին, ովքեր տակավին հոգու խորքում պահպանում են հայրենյաց երկրի հիշողությունը:

Ամերիկյան սրճարաններում նստած երիտասարդները հետ են պահանջում իրենց կորուսյալ հայրենիքը, ինչը մարդկանց մոտ լոկ շինծու ժպիտ է առաջացնում: Այս երիտասարդներն այդ պահին նմանվում են Խերդյանի պատկերած թոշնած դեմքերով հայազգի ծերունիներին: Այս մարդկանց հայրենյաց երկիրը վերածվել է իր դարն ապրած մի իդեալի: Այն, ինչ ամերիկահայ պոետի պատկերած երիտասարդներն ուրվագծում եւ ծրագրում են, շատ ավելի կենսական նշանակություն ունի. խոսքն այն քայլերի մասին է, որոնք անցում են ապահովում անցյալից դեպի ներկան: Այստեղ նրանց անձնական առասպելների թելերը միանում են մեկ կետում:

Թեեւ երկրորդ սերնդին պատկանող հայերը գաղթ չէին տեսել եւ չէին տառապում այն մենության զգացումից, որը համակել էր ավագ սերնդին, սակայն նրանք էլ ունեին իրենց խնդիրները: Դեյվիդ Խերդյանն իր «Ս. Գ.» վերնագրված բանաստեղծության մեջ ակնարկում է, որ այդ երեխաները նմանակման հասուն չափորինակների կարիք ունեին: Այլ կերպ ասած՝ նրանց պետք էին անկախ ծնողներ, որոնք հլու-հնազանդ երեխաների պես կապված չէին լինի հին աշխարհից եկած իրենց հայրերի ու մայրերի հետ: Բանաստեղծը նշված խնդիրն արծարծում է հետեւյալ բանաստեղծության մեջ.

Դժբախտ, անհանգիստ, ձանձրույթով լեցուն
Նստում էիր դու սրճարաններում:
Վարում էիր դու մի մեծ բեռնատար,
Դու՝ ծնողներիդ որդին հոգատար:
Ծնողները քո ծեր են, զառամյալ,
Դժվար է նրանց հոգսերը հոգալ,
Ավելի դժվար, քան քաղաքային
Հայազգի միակ մարմնամարզիկին
Հասցնելու իր փառքի գագաթին:
Նրանք քեզ հաղթում են գեթ մեկ անգամ,
Իսկ դու մեզ հաղթում ես կրկնակի անգամ,
Եվ որքան էլ շատ մարդ չի մտածում,
Նա բնավ երբեք չի էլ գիտակցում,
Թե ինչու հայ կուռքերը չեն հասունանում:

Խոսակցական ոճի զգայունությունը եւ ծուղակված եռանդի պատկերները ելք են ապահովում հիասթափության ու անբավարարվածության զգացումների համար: Այդ զգացումներն առաջացան այն ժամանակ, երբ մարդիկ տեսան իրենց կուռքի ձախողումը բարձրագույն լիգայում: Խերդյանն իր «Ջեք Թաքթաքյան» էլեգիայում փոխում է տեսակետը՝ գովաբանելով նվազ շնորհալի որդու ինքնագոհողությունը հանուն իր ընտանիքի: Այս ինքնագոհողությունն առավել ակնհայտ է դառնում ժամանակի ընթացքում: Ծալովի աթոռներին եւ նստարաններին նստած ծերունիների պես Խերդյանի պատկերած երիտասարդն ավելի «նեղ ուղի» է ընտրել: Սակայն ժամանակի ընթացքում հայ երիտասարդի նվիրվածությունը մի տեսակ *«կամուրջի է վերածվում այս նոր ու օտար երկրի հետ»* («Ես հիշում եմ մայր գետը» բանաստեղծությունից, տե՛ս Bedrosian M., The Magical Pine Ring, Detroit, Wayne State University Press, 1991, էջ 171):

Դեյվիդ Խերդյանի ընտանիքն անցումային շրջանի ազգային ընտանիքի տիպիկ ներկայացուցիչ է: «Քրոջս» բանաստեղծության մեջ ամերիկահայ պոետը խոսում է այն բոլոր մարդկանց անունից, ովքեր օտարվել են միմյանցից: Նրանք ամոթխած են, ինքնամփոփ ու մենակյաց: Խերդյանի հերոսները ունակ չեն գտնելու «ամոքող նրբագեղություն»՝ ձուլվելով իրենց նոր երկրի հետ.

Շարունակությունը՝ էջ 8

ԵՂԻԾԵ ՉԱՐԵՆՑ

Ընկեր Ալին եւ արխադաշ Լենինը

(«ԼԵՆԻՆՆ ՈՒ ԱԼԻՆ»)

Սկիզբը՝ էջ 6

Ուրեմն Մոսկվան ոչ միայն աշխարհի կենտրոնն է, այլեւ հին է անգամ մահմեդականների սրբավայր Մեքքայից, ինչը պատմականորեն հավաստի չէ: Մեքքան առաջին անգամ հիշատակվել է 2-րդ դարում, այդտեղ է ծնվել մահմեդականության հիմնադիր Մուհամմադը (Մահմեդ), 7-րդ դարից հռչակվել է մահմեդականների սուրբ քաղաք եւ դարձել ուխտատեղի, եղել է հոգեւոր-մշակութային կենտրոն: Մոսկվան տարեգրությունների մեջ հիշատակվում է 1147-ից, 1156-ին իշխան Յուրի Դոլգորուկին փայտով պարսպապատել էր քաղաքը, 14-րդ դարում եղել է Մոսկվայի մեծ իշխանության կենտրոն, 15-րդ դարից (Իվան Երրորդի օրոք) - 1712 թ. եւ 1918-ից առ այսօր Ռուսաստանի մայրաքաղաքը, 1922-1991 թթ.՝ ԽՍՀՄ մայրաքաղաքը: Բայց էականը քաղաքների հին ու նոր լինելը չէ, էականն այն է, թե Մոսկվան հատկապես ինչու է այդպես ներգործել Ալիի վրա: Որովհետեւ այնտեղ ապրում է ոչ այլ ոք, քան հեղափոխության առաջնորդ Լենինը, ով Ալիի համար, փաստորեն, ավելի զորեղ անուն է, քան անգամ Մուհամեդը, հակառակ դեպքում, նրա պատկերացմամբ, Մոսկվան Մեքքայից հին չէր լինի:

Ալին ապրում է Տրապիզոնում, նրա հայրենի քաղաքը Մոսկվայից հեռու է եւ անհասանելի է Ալիին: Ըստ պոեմի՝ ոտքով չես հասնի, իսկ գնացքն էլ Ալիի բանը չէ: Լենինն Ալիի համար «արխադաշ» (ընկեր) է, «Մեծ է, ինչպես ամենամեծ խալիֆե (խալիֆ - թագավոր, տիրակալ), հասկանում է «ֆուխարայի հալից» (ֆուխարա - ժողովուրդ): Եվ ահա այս ամենը բավարար է, որպեսզի Ալին սիրի Լենինին:

Հաջորդում է Ալիի սոցիալական վիճակի նկարագրությունը: Ալին թիավար է, ամիսը ստանում է երեքուկես լիրա (լիրան, ըստ Չարենցի տողատակի ծանոթագրության, հավասար էր մեկ ռուբլու), Ալին չքավոր է, եւ տերը նրան շահագործում է ինչպես գրաստի: Պարզվում է, որ Ալին Լենինի մասին լսել է մի ռուս նավաստուց, նրանից էլ յուրացրել է մի քանի ռուսերեն բառ՝ «կառոշ» (хорошо, хорошо - լավ է): Նույնիսկ՝ «չոք կառոշ» (շատ լավ), եւ որ ավելի կարեւոր է՝ «Լենին վար - // Բուրժույ յո՛կ» (Լենինը կա, բուրժույը չկա): Բուրժույն էլ նրա համար նշանակում է «զանգի, էֆենդի, աղա»: Լենինն Ալիի համար բեյուկ (մեծ) խալիֆ է, ով, սակայն, հասկանում է ֆուխարայի հալից: Ահա իր այս չարքաշի սիրով էլ Ալին սիրում է Լենինին:

Հաջորդում է Լենինի մահը՝ «Որբացել է ասես պրոլետարը», քանի որ «Էլ չկա Կարմիր Ղեկավարը», բայց պետք է բռունցքվել, «Որ մնա՛ բանվորի դիկտատորը»:

Մինչեւ Լենինի մահվան լուրն առնելը՝ ծանոթ ռուս նավաստուց Ալին հետաքրքրվում է Լենինի առողջությամբ. «Կարաշո՛ Լենին» (Լենինը լա՛վ է), բայց «սալամ»-ի (բարեւ) եւ «դրաստի»-ի փոխարեն անօգ ասում է կամաց. «- Ալի՛, Լենին յո՛կ» (Ալի՛, Լենինը չկա): Ասում է ու գնում:

Գիշերով Ալին գնում է ռուսական հյուպատոսություն, հսկիչը ճանաչում է «Կարոշո Ալուն»: Չի բացառվում, որ ընկեր Ալին լինի նաեւ թուրք կոմունիստ, իսկ այն, որ բոլշեւիկների համակիր է, ակնհայտ է: Հյուպատոսից նա փորձում է վերջնականապես համոզվել՝ իրոք «Լենին յո՞կ»: Ծանր, բայց խոսուն լռությունից հետո («Լռություն: Ինչպես մուրճ՝ տաշող») Ալին մրմնջում է՝ «նեթ կարաշո» (нехорошо, լավ չէ): Լենինի մահով Ալին իր չարքաշ վիճակն է ողբում՝ «Ալի պլոխ: Ալի - աղլիոր» (Ալին վատ է, Ալին տխուր է, լալիս է): Եվ վերջը. «Ողջո՛ւյն արխադաշ Ալուն: // Հաղթանա՛կ գործին Իլյիչի»:

Ի՞նչ եղավ: Եղավ այն, որ թուրք պրոլետար ընչազուրկ ընկեր Ալին դարձավ լենինյան պատգամների հերթական գաղափարակիրը:

Ինչո՞ւ այդպիսի մեկը Հայաստանում չկար, որպեսզի սրտանց ցավեր Լենինի մահվան կապակցությամբ, եւ այդպիսի մեկին Չարենցը գտավ Թուրքիայում... Սա շատ պարզ, բայց խորքի տարողությամբ բարդ հարց է եւ իր լուծումով կրում է Չարենցի հանճարի դրոշմը:

Չարենցը բացահայտորեն ասում-հասկացնում է, որ Խորհրդային Ռուսաստանի՝ Լենինի բարեկամն ու դաշնակիցը Թուրքիան է եւ ոչ թե եղեռնազարկ Հայաստանը: Այդ իսկ պատճառով նրա մահը ողբում է ոչ թե հայ Ալեքը կամ Ալիկը, այլ թուրք Ալին:

Դավիթ ԳԱՍՊԱՐՅԱՆ
Բանասիրական գիտ. դոկտոր, պրոֆեսոր

Ն. ԲԵՐԴՅԱԵՎ

ՊԱՐԱԴՈՔՍԱԼ ԲԱՐՈՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՌՈՒԹՅՈՒՆ

ՕՐԵՆՔԻ ԲԱՐՈՅԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍՏԵՂԾԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐՈՅԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ



Սկիզբը՝ էջ 6

Ղորանում կյանքը կազմակերպված է, ենթարկված օրենքին, ամենուր անմաքրության վախ է, արգելքներ, տաբու, ամենուր՝ անջրպետներ եւ անջատող կարգախմբեր: Անմաքուր ու մաքուր, արգելք ու արգելքի խախտում. ահա մարդու սկզբնական բարոյական կյանքի հիմնական կարգախմբերը: Արգելքը խախտելու եւ անմաքուր դառնալու վախը բարոյական հիմնական շարժիչն էր: Դա էլ հենց օրենքի բարոյագիտությունն է իր սկզբնական փուլում: Այն ժամանակի ընթացքում ձեւափոխվում է օրինադրության քրիստոնեության ներսում, Կանտի բարոյագիտության մեջ, իդեալիստական նորմատիվիզմում, Օրենքի բարոյագիտության ակունքներում ընկած է կրոնական երկյուղը՝ համարյա կենդանական վախը, որը հետո սուբլիմացիայի է ենթարկվում: Ապականումի եւ արգելքի վախը հետապնդում է մարդուն ընդհուպ մշակույթի ամենաբարձր աստիճաններին՝ ընդունելով սոսկ ավելի նուրբ ձեւեր: Սակայն հիմքում միշտ ընկած է սկզբնական աֆֆեկտը: Օրենքն իր բնույթով միշտ վախեցնում է: Նա չի կերպարանափոխում մարդկային բնությունը, չի ոչնչացնում մեղքը, այլ վախի միջոցով արտաքնապես ու նաեւ ներքնապես մեղքը պահում է որոշակի սահմաններում: Եվ բարոյական կարգն ու կանոնը աշխարհում պահպանվում է առաջին հերթին կրոնական վախով, որը հետո ընդունում է բարոյական օրենքի ձեւ: Այսպիսին են նախասկզբնյան մեղքի հետեւանքները: Դրան պետության ու հասարակության կյանքում համապատասխանում են դաժան պատիժը, մահապատիժը, որոնց տրվում են բարոյական նշանակություն: Օրենքի բարոյագիտությունը, ինչպես մեղքի բարոյագիտությունը, ճանաչվում է, որովհետեւ նա գիտի վերացական բարին, վերացական բարու նորմերը, բայց չգիտի մարդուն, մարդկային անձնավորությանը, նրա անկրկնելի անհատականությունն ու նրա կյանքի ներանձնական ներաշխարհը: Սրանում է օրենքի բարոյագիտության բացարձակ սահմանը: Սրան հետաքրքիր չէ մարդը, կենդանի արարածը՝ իր ուրախություններով ու տառապանքներով, այլ՝ մարդուն տրված բարու վերացական նորմը: Օրենքի բարոյագիտության այդ հատկությունն ուժի մեջ է մնում նաեւ այն ժամանակ, երբ նա դառնում է փիլիսոփայական եւ իդեալիստական եւ հռչակում է մարդկային անձնավորության ինքնարժեքը: Այսպես՝ Կանտի հայացքներում մարդկային անձնավորության սկզբունքը բաձարձակապես վերացական է եւ նորմատիվ, այն առնչություն չունի կենդանի ու անկրկնելի մարդկային անհատականության հետ, որով Կանտը երբեք չի հետաքրքրվել: Կանտի օրենքի բարոյագիտությունն իրեն հակադրում է էվդեմոնիզմի սկզբունքին, երջանկությանը՝ որպես մարդու կյանքի նպատակ, բայց երջանկությունը եւ էվդեմոնիզմը հասկանում է իբրեւ բարու վերացական նորմ եւ բնավ չի հետաքրքրվում մարդկային անձնավորության կենդանի անկրկնելի անհատականության երջանկությամբ: Օրենքի բարոյագիտության մտածողության մեջ կա ինչ-որ ճակատագրական ու անելանելի բան, որից մշտապես վրիպում են կոնկրետն ու անհատականը: Ուզածդ օրենքի բարոյագիտությունը պետք է ընդունի, որ վերացական բարին վեր է կոնկրետից, անհատական մարդուց, թեկուզ վերացական բարի ասելով՝ պետք է հասկանալ անձնավորության սկզբունքը, երջանկության սկզբունքը: Բարոյականությունը, որը միշտ դատապարտում է մարդկանց, հենց ծնունդն է օրենքի: Սակայն այդ բարոյականությունը անբարո է բարձրագույն անօրինադրական բարոյագիտության առջեւ:

Օրենքը ոչ միայն չի հետաքրքրվում անձնավորության կյանքով, այլեւ նրան չի տալիս ուժ իրականացնելու այն բարին, որը պահանջում է նրանից: Սա է օրենքի բարոյագիտության հիմնական հակասությունը, որն անխուսափելիորեն բերում է փրկաբանական կամ շնորհի բարոյագիտությանը: Օրինադրական անպտուղ առաքինությունը, որը զուրկ է լիության մեջ կյանք տվող բարեբեր ու բարեգութ էներգիայից, հաճախ հանդիպում է քրիստոնեական ճգնակեցության մեջ, որը կարող է համարվել օրենքի բարոյագիտության մի ձեւ՝ քրիստոնեության ներսում: Վանական-ճգնավորական թշնամանքը կյանքի հանդեպ, կյանքի հանդեպ ressentiment-ը օրենքի բարոյագիտության հետադիմությունն է փրկաբանական եւ շնորհի կրոնի ներսում. այստեղ կյանքի պայծառացմանը նպաստող ուժեր չկան: Եվ միայն ճգնակեցությունը՝ միստիկայի հետ միավորված, այլ բնույթ է կրում: Բարոյականության օրենքը, քաղաքակրթության օրենքը, պետության եւ իրավունքի օրենքը տնտեսության եւ տեխնիկայի օրենքը, ընտանիքի օրենքը եւ եկեղեցու օրենքն են կազմակերպում, պահպանում ու դատում, երբեմն էլ խեղում կյանքը, բայց երբեք չեն պաշտպանում նրան շնորհի ուժով, չեն լուսավորում եւ չեն պայծառակերպում այն: Օրենքն անհրաժեշտ է մեղսական աշխարհի եւ մարդկության համար, եւ այն չի կարելի մեխանիկորեն արգելել: Բայց օրենքը պետք է հաղթահարվի վերին ուժով, օրենքի անդեմ իշխանությունից աշխարհն ու մարդը պետք է ազատագրվեն: Օրինադրական բարոյականության սարսափն այն է, որ նա ձգտում է մարդուն դարձնել առաքինության ավտոմատ: Առաքինության անտանելի ձանձրույթը, որը ծնում է ապաբարոյություն՝ հաճախ անչափ թեթեւամիտ, օրենքի բարոյագիտության յուրօրինակ դրսեւորումն է՝ վերին ոչ մի ուժ չճանաչող: Ըստ էության՝ օրենքի բարոյականությունը կառուցվում է այնպես, կարծես Աստված չկա, առանց Աստծո օգնությունը հաշվի առնելու: Եվ անխուսափելի են պարբերական ընդվզումներն օրինադրական առաքինության դեմ, ինչպես նաեւ վերադարձն այդ ատելի օրինադրական առաքինությանը: Այդ ընդվզումները բարոյական երեւույթներ են, որոնք պահանջում են իրենց հանդեպ ուշադիր վերաբերմունք: Համաշխարհային կյանքի բոլոր ոլորտներում օրինադրական բարոյագիտության գերակայությունը մեծամասնության օրենքի օբյեկտիվ արտահայտությունն է, այսինքն՝ դա կարգուկանոնի անհրաժեշտ կազմակերպությունն է մեծ զանգվածների կյանքի, մարդկության մեծ մասի, ինչպես նաեւ բնության կյանքում մայրերի մեծ զանգվածի: Սրանում է օրենքի տիեզերական իմաստը: Ազատությունն էլ, որ հակադրվում է օրենքի անսահմանափակ իշխանության դեմ կյանքի բոլոր ոլորտներում, ընդհակառակը փոքրամասնության օրենքի արտահայտությունն է, այն առաջին հերթին հետաքրքիր է փոքրամասնություն կազմող հոգեւոր ազնվականության համար: Ազատությունն ազնվականական է եւ ոչ թե ժողովրդավարական: Փոքրամասնության ազատությունը սովորական է, նույնիսկ կապված է մեծամասնության օրենքի պարտադիր զսպվածության հետ: Այս է պատմության մեջ ազատության պարադոքսը: Ազատության ստեղծարար միտքն ազնվականական է: Սակայն կյանքի եւ մտքի վրա օրենքի իշխանության դեմ ընդվզում է ոչ միայն հոգեւոր «ազնվականությունը», այլեւ դիոնիսական «ժողովրդավարական» կյանքի ուժերը: Այդ իսկ պատճառով էլ աշխարհում տեղի են ունենում հեղափոխություններ, որոնք նաեւ ձեռք են բերում բարոյական նշանակություն: Ազնվականությունն ինքն իրեն երբեք հեղափոխություն չէր անելու: Սովորական իշխանությունը, հասարակական կարծիքը, ավանդույթները «ժողովրդավարական» են, դրանք միշտ մեծ թիվ են կազմում: Բայց մեծամասնության «ժողովրդավարությունը» եւ զանգվածների ընդվզումը սովորական, հասարակական կարծիքի, ավանդությունների դեմ նրա համար են, որ անմիջապես ստեղծեն նոր սովորություններ, հասարակական կարծիք ու ավանդույթներ *(Լե Բոն լավ է խոսում հեղափոխական զանգվածների պահպանողականության մասին: Տե՛ս նրա «Phsychologie des foules» գործը)*: Օրենքի բարոյագիտությունը հիմնված է այն հակասությունների վրա, որոնք բացահայտվում են հենց իր սեփական տիրույթում: Միայն շնորհի բարոյագիտությունն է «ազնվականական» ազատությունից եւ «ժողովրդավարական» օրենքից վեր կանգնում:

Շարունակելի

Թարգմանությունը՝ Ա. Ս.-ի

Դեյվիդ Խերդյանը եւ նրա բանաստեղծական ժառանգությունը

Սկիզբը՝ էջ 7

Մեզնից բոլորը մեր իսկ ցանկությամբ
Ստեղծել ենք անկյուն՝
լի խաղաղությամբ:
Թեեւ մենք ապրում ենք միեւնույն
երկրում,
Սակայն դա հավերժ օտար է մնում:

(«Հարգանքի տուրք Սդանային»)

Ամերիկահայ պոետի պատկերմամբ սփյուռքահայ երեխաներն ինքնամեկուսացված վիճակում են: Նրանք թաքնվել են այն փոքր, խաղաղ աշխարհում, որ իրենք իրենց համար ստեղծել են: Հայ մանուկներն անկարող են ընդունել եւ տեր կանգնել իրենց մշակութային ժառանգությանը, մինչեւ ժամանակն օգնի նրանց վերագտնել այն եւ քաղել դրա պտուղները: «Ճնճղուկ» բանաստեղծության մեջ Խերդյանը հարգանքի տուրք է մատուցում 1915 թ. ցեղասպանության զոհերի հիշատակին: Ամերիկահայ պոետի գրվածքում հայերի դառն անցյալը կարծես կենդանություն է ստանում *(տե՛ս Kherdian D., «Sparrow», in On the Death of My Father and Other Poems (Fresno, Calif.: The Giligia Press, 1970), էջ 1).*

Հայազգի կինը ճաշն է իր եփում
Այն կրճոնքներով, որ մենք ենք թողնում:
Կտորտանքները մեր կողմից թողված
Իմաստավորում են կյանքը լռակյաց:

Նա կորցրել է կյանքում ամեն բան,
Եվ այժմ խնդրում է մեզնից շատ
քիչ բան:
Նա հանգիստ-հանդարտ կյանքն է իր
ապրում,
Որին համակել է շատ մեծ տխրություն:
Երբ նա նստում է ճաշի սեղանին,
Նա լուռ նայում է իր լուսամուտին,
Դրանով անցնող արեւի լույսին,
Իր առաջ դրված նուրբ գավաթներին:

Բանաստեղծության ազատ շարադասությունը եւ ձեւը արտացոլում են հերոսուհու տրամադրությունը: Կուռքի պես եկեղեցու դիմաց նստած ծերունու պես Խերդյանի հերոսուհու պարզ պահանջմունքներն աղճատում են նրա ներքին հարստությունը: «Պատուհանները, դրանց միջով ներս հորդացող լույսը եւ հերոսուհու փոքր գավաթները»,- այս ամենը բավական է ամենակարեւոր բաները պահպանելու համար եւ վերագտնելու այն ճշմարտությունը, որը ժամանակին կորցվել էր: «Մայրս եւ ամերիկացիները» բանաստեղծության մեջ մայրիկի գեղարվեստական խորաթափանցությունը հնարավորություն է ընձեռում անցում կատարելու մեկ մշակույթից մյուսին.

Օրերից մի օր նա նայում է դուրս
Իր կացարանի բաց լուսամուտից
Եվ տեսնում է նա հուշերը իր հին
Եվ տեսնում է նա կյանքը սպասվելիք:
Իսկ այնուհետեւ ասում զարմացած.
«Օտարները այս իրենց մանչուկին
Պահում-մեծացնում են ինչպես թռչունի»:

(«Հորս հիշատակին»)

«Ճնճղուկը» բանաստեղծության մեջ մայրիկը կանգնած է պատուհանի մոտ, որը մի տեսակ խորհրդանշական զտիչ է հանդիսանում «հիշողության եւ գալիքի» միջեւ: Սակայն այս բանաստեղծության մեջ իսկական պատուհանը հայկական արտահայտությունն է, որը որոշակի ուղղություն է հաղորդում ժողովրդական իմաստության պատառիկներին: Այդ իմաստությունը բխում է մի հիշողությունից, որը հագեցած է գյուղացիական անցյալի պատկերներով:

Շարունակելի

Տիգրան ՄԱԼՈՒՄՅԱՆ

Բանասիրական գիտ. թեկնածու

ՔՐԻՍՏՈՆՅԱ ՀԱՅԱՍՏԱՆ

Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ

Հիմնադիր՝
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
Հրատարակիչ՝
«Քրիստոնյա Հայաստան» թերթի խմբագրություն
Գլխավոր խմբագիր՝
Աստղիկ Ստամբոլցյան
Գրանցման վկայական՝ 624
Խմբագրության հասցեն՝
Մայր Աթոռ Սբ Էջմիածին
Հեռախոս՝ 517197
Էլ.փոստ՝ qh@etchmiadzin.am
astghikstam@gmail.com
web կայք՝
kh-tert.livejournal.com
krishayas.wordpress.com
Ստորագր. տպագր. 3.8.2015 թ.
Տպաքանակը՝ 2100
Գինը՝ 50 դրամ